

355

U-68

Գ. Լ. ՍՊԿՈՒՆԻՆ-ՍՊԿՈՒՆԻՆՍԿԻ

ԶՈԿԸ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՅԵՐԵՎԱՆ

1929

11 MAR 2010

35
U-71

Պ. Լ. ՍՈՎՈՐՈՎ-ՍՈՎՈՐՈՎՍԿԻ

355
U-68

Այս

ՋՈԿԸ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

124



15269-57

ՀԱՅԱ. ՀՐ. ԴԻՎ-Ի ՔՐԱԳՐԵԹՆԻ ԽՄԲԱԳԻՐ.-ՀՐԵՏ. ՄԸՍ

ՅԵՐԵՎԱՆ

1929

01 AUG 2013

40.507

П. Л. СОКОЛОВ.—Соколовский отделение
в обороне

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 608
ԳՐԱՌԵՊԻԿԱՎԱՐ 1094 Բ.
ՏԻՐԱԺ 2000

ԻՆՉ Ե ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԸ


Յուրաքանչյուր մարտ նպատակ ունի քայքայել հակառակորդին կրակով, իսկ հետո ջախջախել նրան բռնամարտում: Մարտը բաղկացած է հարձակողական և պաշտպանողական դործողություններից:

Մարտում ամենահաստատ հաջողության, իհարկե, կարելի չէ հասնել հարձակողական (ակտիվ) դործողություններով: Բայց յերբեմն դեպի հաջողություն և տանում նաև պաշտպանությունը, վերստին հաջողության արվեստը ևս, ճիշտ նույնպես, կայանում է նրանում, վոր յուր ղեկավար կրակով ջախջախելով հակառակորդին, անցնել հարձակման կամ հակադրոհի և վերջնականապես ջարդել թշնամուն ու լինով և նոնակներով:

Հարձակողական մարտը, վորպես զուտ ալդպիսին, յերբեք չի լինում: Միշտ լինում է այնպես, վոր յեթե մի տեղ հարձակվում են, ապա մի ուրիշ տեղ անշուշտ պաշտպանվում են: Փոքր մասերի համար ալդ նկատելի չէ, բայց արդեն վաշտի համար կարող են լինել դեպքեր, յերբ հարձակումն ու պաշտպանությունը հերթով տեղի յեն ունենում միևնույն ժամանակ և միևնույն նպատակի համար (դժանկար № 1): Վորեւ ուղղությամբ վճռական հարված հասցնելու համար, միշտ պետք է լինում ալ ուղղություններում պաշտպանություն կազմակերպել՝ վորքան հնարա-

վոր և հակառակորդի շատ ուժեր այդ ուղղութիւններում բեռնելու և հարձակվողների դրութիւնը թեթեւացնելու համար:

Բացի այդ, պաշտպանութիւնը դորձադրվում և նաեւ պահպանութեան ժամանակ, յերբ առաջ շարժված պահպանող մասերը պաշտպանվում են, վորպեսզի ապահովեն յետևում հանդատացող զորքերին: Պաշտպանութեան են դիմում նույնպէս և առաջավոր մասերը՝ (պահպանութիւնը, հետախուզութիւնը) հակառակորդի հետ ընդհարվելու ժամանակ, վորպեսզի իրենց գլխավոր ուժերը մոտենան:



Գծնկ. 1. Պատկերացնում և մարտը, վորտեղ պաշտպանութիւնը միացած և հարձակման հետ.

Վերջապէս պետք և պաշտպանութեան դիմել մարտից դուրս գալու ժամանակ, յերբ պահանջվում և



Նկար 2. Բացատրում և թե ինչ և պատկերացված № 1 դժանկարում.

կտրվել հակառակորդից: Մարտից զուրս գալը ծածկող զորամասերը գլխավորապես գերմում են պաշտպանության: Բոլոր այդ դեպքերում պաշտպանությունը նրանում չի կայանում, վոր պատենչների յետևը նստած յետ մղել հակառակորդին, յերբ նա վրա յե տալիս խրամատները: Պաշտպանությունը կայանում է նրանում, վոր պահելով զբաղված տեղանքը, կազմալուծել թշնամուն կրակով և հակազդրոհով վոչնչացնել նրան: Դրա համար պաշտպանվող զորքերը բաժանվում են հետևյալ խմբերի:—

1. Հարվածող խմբակ, վորի մեջ նշանակվում են պաշտպանվող ուժերի մեկ յերրորդից վոչ պակասը: Այդ խմբակը տեղավորվում է պաշտպանվող տեղամասի խորքում: Այն դեպքում, յեթե հակառակորդը թախանցում է պաշտպանողական շերտը, այդ խմբակը հակազդրոհով յետ է մղում նրան, իսկ յեթե պարագան թույլ է տալիս, յեթե ձեռնուտ յե, ապա նրա հետ մարտի յե բռնվում նաև պաշտպանողական շերտից ել այն կողմ:


2. Կաշկանդիչ խմբակ, վորն իր մեջ է առնում մարտական կարգի բոլոր ուժերի մինչև յերկու յերրորդ մասը: Նրա խնդիրն է—դեռ ու դեն զցել, բարոյալքել հակառակորդին (կրակով և հակազդրոհով) ցնդեցնել նրա հավատը հաջողության նկատմամբ, և դրանով նպաստավոր պայմաններ ստեղծել հարվածող խմբակի կողմից հարձակվող թշնամուն հակահարված հասցնելու և վոչնչացնելու համար:

3. Ոժանդակ, վորը յերբեմն կարող է առանձնացվել այս կամ այն դեպքում ռզտազործելու համար:

Ոժանդակի ուժը կարող է լինել պաշտպանվող ամբողջ ուժերի մինչև մեկ իններորդ մասը:

4. Կրակային խմբակներ (հրետանի և հաստոցավոր դնդաքեր) պետք է իրենց կրակով ուժեղացնեն կաշկանդիչ խմբակի դիմադրությունն ու կրակը կամ պաշտպանեն ու նախապատրաստեն հարվածող խմբակի հակահարվածը (դժանկար № 3):

ՀԱԿԱՌԱԿՈՐԴ



ԳՐԱԿ. 3. Վաշտի որինակելի դասավորությունը պաշտպանության համար:

Պաշտպանության համար հետևակ մասերը բռնում են վորոշ շրջաններ: Պաշտպանության շրջան—դա մի շարք տեղական առարկաներ են, որինակ, անտառի յեզերքը, մի շարք թմբեր, դեռ և այլն: Այդ շրջանը պետք է ընտրվի այնպիսին, վորպեսզի նա թույլ տա ամբողջ տեղանքի առջևի և կողմերի, ինչպես նաև այդ շրջանի մեջ մտնող տեղական առարկաների արանքում ընկած տարածության վրա խաչաձև

կրակ բանալ: Պաշտպանության շրջանի մեծությունը կախված է նրանից, թե ինչքան կարևոր է նրա համար շրջանը և թե նրա մեջ պաշտպանվող մասերը վտրքան կարող են փոխադարձաբար պաշտպանել իրար՝ խաչաձև կրակով ու հակադրոհներով: Պաշտպանության համար հարմար տեղանքում, պաշտպանության շրջանի մեծությունը վաշտի համար կարող է լինել մինչև հազար մետր ճակատի լայնությամբ և նույնքան ել խորությամբ, դասակի համար—մինչև 500 մետր:

Պաշտպանվել կարող է ամեն մի գործառն,—խոշոր և մանր,—բայց յուրաքանչյուր պաշտպանության ուժը կախված է.—

1. Հետևակի յուրաքանչյուր մարտիկի կայունությունից ու համառությունից: Յեթե մարտիկը հաստատուն ցանկություն ունի յետ մղելու հակառակորդին, յեթե նա ունի ինքնավստահություն իրեն և իր զենքի նկատմամբ, ապա պաշտպանվողներն ոգտադործում են պաշտպանության բոլոր միջոցները և թշնամին հակառական կորուստներ կկրի,—

2. Հրացանի և գնդացրային կրակի համաձայնեցրած գործադրումից: Կրակի կարողությունն այժմ այնքան մեծ է, վոր մի բուռն լավ ծածկված, սառնարյուն ու դիպուկ հրաձիգներ 2—3 զնդացրով կարող են յերբեմն կանգնեցնել ամբողջ մի գումարտակի գրոհը:

3. Մարտի համար տեղանքի նախորոգ բնութաբան ու պատրաստման հնարավորությունից, գործադրելով միաժամանակ սապյորա-քողարկման բոլոր

միջոցները, հարձակվողի շարքերում պարտությունը մեծացնելու և յուր ուժերը կրակից ծածկելու համար:

4. Հակազրոհի ուժից: Ոգտվելով տեղանքն իմանալուց և դեպի առաջին մասերը վրա պրծած գրոհողի շարքերի ցրվածությունից, պաշտպանվողի ռադակալն ու հարվածային խումբը կարող են տապալել մինչև իսկ թվով զգալիորեն իրենց գերազանցող հակառակորդին, յեթե ճշունդը կտարվի հմտորեն և ուժգնությամբ:

5. Զորքի մյուս տեսակների, այսինքն ավիացիայի, տանկերի, զրահապատ ավտոմոբիլների և առանձնապես հրետանու հետ համաձայնեցրած գործողություններից:

ԻՆՉ Ե ԶՈԿԸ

Զոկը—դա հիմնական մարտական միավորն է, վորը մարտի բոլոր պայմաններում ղեկավարվում է յուր հրամատարի ձայնով կամ նշաններով: Այդ նշանակում է, վոր յուրաքանչյուր մարտիկ տեսնում կամ լսում է իր հրամատարին, վորպիսի հանգամանքը սաստիկ հեշտացնում է ջոկի աշխատանքը և նրան դարձնում է մի ամբողջություն:

Նայած մարտ մղելու համար ջոկում յեղած միջոցներին, ջոկերը լինում են հրաձգային և գնդացրային:

Հրաձգային ջոկերը բաղկացած են լինում հրացաններով, ձեռքի նռնակներով զինված մարտիկներից, և մարտում նրանց հիմնական խնդիրն է լինում հարվածը, այսինքն՝ գրոհը և հակադրոհը:

Գնդացրային ջոկերը գինված են լինում ձեռքի մեծանք գնդացրերով, վորի համար եւ ջոկերը կոչվում են—ձեռքի գնդացրի ջոկ, և ծակը կամ հաստոցավոր գնդացրային ջոկ:

Ձեռքի և հաստոցավոր գնդացրային ջոկերը մարտում հիմնական խնդիր են ունենում՝ իրենց կրակով ծածկել հրաձգային ջոկերի շարժումը և պաշտպանել ու ոժանդակել նրանց գրոհին: Բայց մարտի պայմաններում, վորը լի յե ամեն տեսակի պատահականութուններով, գնդացրային, և զլխավորապես ձեռքի գնդացրային ջոկի մարտիկները ևս կարող են հրաձգային ջոկերին հավասար գրոհել հակառակորդին: Նույնը և հրաձգային ջոկերը, յերբ հնարավորութուն չկա կամ ձեռնտու չե գրոհել, պետք ե կատարեն կրակային խնդիրներ, այսինքն՝ հարվածել հակառակորդին գիպուկ հրացանային կրակով:

Մարտական պայմաններում ջոկը տանում ե միանգամայն դանազանակերպ աշխատանք—նա կատարում ե հետախուզութուն, պահպանութուն, կրակային մարտ ե մղում, հարձակվում ե, պաշտպանվում ե:

Այս գրքույկում մենք կնայենք ջոկի մարտական աշխատանքը պաշտպանության ժամանակ, իսկ թե ուրիշ դեպքերում ինչպես ե գործում ջոկը, այդ մասին կպատմեն ուրիշ գրքույկներ:

ՋՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ա. Հրաձգային ջոկեր: Պաշտպանության ժամանակ հրաձգային ջոկերի հիմնական խնդիրն ե հանդի-

սանում աբաղ հակահարվածներ հասցնել հակառակորդին, յեթե նրան հաջողվում ե ներս պրծնել դասակի պաշտպանության շրջանը: Հրաձգային ջոկերը տեղավորվում են բոլորը միատեղ, կամ ել յուրաքանչյուր ջոկն առանձին—այնպիսի տեղերում, վորտեղից ավելի հարմար ե հակադրոհի անցնել ներս պրծած հակառակորդի վրա: Թե յերբ ե ամենից հարմար ժամանակը գրոհի անցնելու համար, այդ պետք ե խմանա ջոկի հրամատարն ինքը, հետեւելով հակառակորդին: Ամենից լավ ե այդ աշխատանակ, յերբ հակառակորդը նոր միայն անցել ե մեր տեղավորությունը: Այդ ժամանակ հակառակորդի առաջացումը քիչ ընդմիջվում ե, յերբ նա ըմբռնում ե թե իրեն վորտեղից և ինչ ե սպառնում և ինչ միջոցներ պիտի ձեռք առնել հետո: Լավ ե հենց այդ ժամակ միասին նետվել նրա վրա, հնարավորութուն չտալով նրան ուշքի դալու և ընտելանալու նոր տեղին: Համենայն դեպս հակադրոհը պիտի կատարել այն ժամանակ, քանի դեռ հակառակորդն իր գնդացրերը չի հասցրել գրաված կետին:

Գրոհից առաջ հրաձգային ջոկը դասավորվում ե կամ յերամաշար, կամ ել շղթայով, յուրաքանչյուր մարտիկի համար խրամատ փորելով, կամ յերկուսից—չորս մարտիկի համար խրամատ սաղքելով, կամ ել, վերջապես, մի ամբողջ ջոկի համար մի ընդհանուր խրամատ փորելով, վորպեսզի հակառակորդը միանգամից գլխի չընկնի թե վորտեղից պիտի սպասել հակադրոհը. փորված խրամատները մեծ խնամքով պետք ե քողարկվեն: Ամենից հեշտ ե, իհարկե, քողարկել հատ—հատ խրամատները, բայց քանի վոր

այդպիսի խրամատները ցրված կլինեն բավական տարածութեան վրա, ապա բոլոր հրացանածիղներին եւ պետք ե հայտնի լինի այն ազդանշանը, վորով նրանք արագորեն ու հանկարծակի պետք ե հակադրոհի նետվեն:

Յեթե հրաձգային ջոկը նախորոք նշանակված ե կրակային դործողութեան համար, ապա նրա հրամատարը չափում ե յուր գնդակոծման տեղամասի ամբողջ տարածութեանը մինչեւ բոլոր կարեւոր նշանները ե վերպետի կրակ բանալուց առաջ նրանց անունը տալու համար ժամանակը չկորչի, նշանակվում են պայմանական անուններ կամ համարներ: Որինակ, փոխանակ հրամայելու «առանձին ծառի կամ կաշնուտի արանքով, վարելահողի ուղղութեամբ», — կարելի յե ուղղակի հրամայել — «վարելահողի ուղղութեամբ»:

Ջոկի բոլոր մարտիկները պետք ե ուսումնասիրեն հիշված նշանները՝ նրանց պայմանական անուններով:

Հարձակվող հակառակորդի ուղղութեամբ կրակի համար նշանն ընտրում ե ջոկի հրամատարը, կամ ել դրա ընտրութեանը թողնում ե իրենց՝ հրացանածիղներին:

Յեթե հակառակորդը գրոհի յե շարժվում, հրաձգային ջոկը ծայրահեղ աստիճանի ուժեղացնում ե կրակը, գործելով միաժամանակ նաեւ ձեռքի նռնակներով, յեթե հակառակորդը մոտ ե:

Ջոկի կրակին ուժեղացնելու համար, այդպիսի դեպքերում յերբեմն հրաձգային դասակից արվում են մի-յնրկու լավագույն հրացանածիղներ ե նռնածիղ-

ներ, վորոնք դասավորվում են տեղամասում համաձայն դասակի հրամատարի ցուցումների:

Բ. Ձեռքի գնդացրի ջոկեր: Ձեռքի գնդացիրը, դասակի հրամատարի ցուցումների համաձայն, պաշտպանութեան համար տեղ ե դրավում (կրակային կետ) դասակի պաշտպանութեան շրջանի առջևի յեղրում, վորպետի միջին ե մոտիկ հեռակայութեանից կարողանա հարվածել հակառակորդին այն տեղամասում (սեկտորում), վորը նշանակված ե նրա գնդակոծութեան համար:

Կրակային կետն անհրաժեշտ ե ընտրել այնպես, վոր ձեռքի գնդացիրը կարողանա հարվածել առջևն ընկած ամբողջ տարածութեանը ե ինքը խնամքով ծածկվի:

Գնդացրային ջոկի հրամատարը նախորոք նշում ե գնդակոծութեան համար ավելի հավանական նշանները ե չափում ե նրանց տարածութեանը:

Հակառակորդի գրոհի դեպքում ձեռքի գնդացիրը կրակում ե մինչեւ վերջին փամփուշտը, թեկուզ ե հակառակորդն սպառնար նրա թեւերին ե թիկունքին: Այստեղ չպետք ե չորս կողմը նայել, — այդպիսով քեզ չես ոգնի, այլ կկորցնես նշանը ե կխախտես ճիշտ ուղղութեանն ու գնդացրի կրակի ուժը:

Յեթե հակառակորդն սպառնում ե անցնել ձախտը կամ թիկունքը, նրան կկանգնեցնեն ծանր դեմքերը, վորոնք գտնվում են յետում: Իսկ յեթե համենայն դեպս նա պատուի ու անցնի, հրաձգային ջոկերը դուրս կշարտեն նրան: Դրա համար ել դրված կրակային կետից հեռանալը թույլատրվում ե միայն դասակի հրամատարի հրամանով:

Նահանջի դեպքում, մարտից դուրս գալու ժամանակ ձեռքի զնդացիքը պաշտպանում և հրաձգային ջոկերի և հաստոցավոր զնդացրի հեռացումը: Հաստոցավոր զնդացիքը ձեռքի զնդացրի պաշտպանության տակ նոր դիրք է բռնում թիկունքում, և յերբ նա այնտեղ տեղավորվում և կրակ է բանում, յետ և քաշվում նաև ձեռքի զնդացիքը:

Մարտական աշխատանքի բոլոր պայմաններում ձեռքի զնդացիքը պետք է պատրաստ լինի զնդակոծելու ցածրացող (600 մետրից ցած) հակառակորդի սավառնանքները, վորոնց յերևալը միշտ կարելի չէ սպասել, մանավանդ հակառակորդի դրոհի ժամանակ:

Գ. Հաստոցավոր գնդացրային ջոկեր: Պաշտպանության ժամանակ հաստոցավոր զնդացրի կոչումն և—կրակով հարվածել հակառակորդին՝ ինչպես դասակի շրջանի առջևի յեզրում, նույնպես և նրա ներսում, այսինքն այն դեպքում, յերբ հակառակորդը ներս կանցնի: Դրա համար ել հաստոցավոր զնդացիքը տեղավորվում է կամ դասակային շրջանի խորքում, կամ նրա թևում, համաձայն դասակի հրամատարի ցուցումների:

Պաշտպանության ժամանակ հաստոցավոր զնդացիքը պետք է ունենա, բացի հրաձգության ուղղակի նշանառության կրակային կետից, նաև ծածկված դիրքերից կրակ բանալու կետ:

Կրակ բանալուց առաջ, ջոկի հրամատարը պետք է մտահոգվի յուր զնդացրի և կրակային կետերի միջև յեղած ծածկված անցքերի լավ թողարկման համար, չափելով տարածությունը՝ մինչև պարզ յերևացող տեղական առարկաները, վորոնք գտնվում

են զնդակոծության շերտում: Թեթե պարագան ու ժամանակը թույլ են տալիս, ապա լավ է նախորոք դասակի հրամատարի ցույց տված նշանների ուղղությամբ կատարել փորձնական հրաձգություն:

Թեթե հակառակորդն անցել է հարձակման, ապա հաստոցավոր զնդացիքը կրակ է բաց անում սկզբից ծածկված դիրքերից, դասակային շրջանի առջևի յեզրից հաշված վոչ պակաս հազար մետր հեռակայությունից: Թերբ հակառակորդը փոտենում և տեսանելի չէ դառնում, զնդացիքը կրակ է բաց անում ուղղակի նշանառությամբ: Հաստոցավոր զնդացիքը հնարավորություն ունի կրակելու յուրայինների գլխի վրայով և նրանց միջև ընկած տարածությամբ: Դրա համար ել մարտից դուրս գալիս ձեռքի զնդացրի պաշտպանության տակ նա հնարավորին չափ մեծ թռիչք է անում՝ դեպի յետ: Այդպիսի թռիչքից հետո տեղավորվելով, նա իր հերթին ինքն և սկսում յուր կրակով պաշտպանել ձեռքի զնդացրի հեռացումը:

ՋՈԿԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՄԱՐ ՅԵՎ ՋՈԿԻ ՇՐԱՄԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թե պաշտպանության ժամանակ վորտեղ են դասավորվում ջոկերը—այդ առթիվ ասվեց: Նրանք այդ տեղերը բռնում են համաձայն հրամատարի ցուցումների:

Ստանալով նրանից մարտական խնդիրը, ջոկերը առաջորեն խրամատավորվում են: Առաջին հերթին խրամատ է պատրաստվում հաստոցավոր կամ ձեռքի

գնդացրի համար (յեթե նա դասակի հրամատարից հատուկ խնդիր չի ստացել): Այնուհետև տեղավորվում են ջոկի մյուս հրաձիգները:

Ջոկի խրամատը պետք է հնարավորութուն տա յերեք կողմի վրա կրակ բանալու, այսինքն՝ լինի կետաշրջանաձև: Այն անկյունում, վորտեղից կարելի չէ կրակել ամեն ուղղությամբ, տեղավորվում է ձեռքի գնդացիրը:


Ինքնախրամատավորման հետ միասին, պետք է կատարել նաև քողարկում: Քողարկման համար ոգտրվում են ձեռքի տակ յեղած նյութերից (հնձած խոտ, ծառի ճյուղեր) իսկ յեթե միջոցներ կան, ապա ներկել հողապատնեշները, յետևի պատերը և այլն:

Ջոկի հրամատարը գտնվելով պաշտպանության կաշկանդիչ խմբակում, պարտավոր է.—

- 1) բացատրել, թե ինչումն է կայանում ջոկի և դասակի խնդիրը:
- 2) բաշխել կրակային խնդիրները գնդացրորդների և հրաձիգների միջև, այսինքն՝ ով և վորտեղ պիտի կրակի:
- 3) մաքրել խրամատների առջևը, բայց այնպես, վոր դրանից քողարկումը չտուժի:
- 4) վորոշել տարածությունը մինչև առջևն ընկած տեղական առարկաներն ու բնագծերը*):
- 5) սահմանել դիրտողության կարգ:
- 6) վորոշել կրակ բանալու ժամանակն ու կարգը:

*) Բնագիծ — սահման կամ սրան փոխարինող նշան՝ այսինքն՝ թուփ, բլրակ և այլն:

7) Հետևել բոլոր հրաձիգների ճիշտ և արագ քողարկմանը, դիտել ինչպես հակառակորդի վերերկրյա, նույնպես և ոգային դիրտողությունից ճիշտ քողարկվելուն:



Ջոկի հրամատարի կողմից ջոկի խրամատի դիրքի և դիրտողության պայմանների նկարագրումը:



15269-57

8) միջոցներ մշակել հակառակորդի քիմիական հարձակման դեմ և ստուգել, թե կան արդյոք հակա-դադային միջոցներ և ինչ վիճակի մեջ են նրանք.

9) հավաքել հնարավորին չափ ավելի մարտական հրապաշար, ստուգել զենքերի վիճակը (գնդացրերը, հրացանները, նռնակները).

10) նշանակել իրեն տեղակալ.

11) ջոկի բոլոր մարտիկներին ցույց տալ վաշտի փրակապային և դասակի փամփռային կետերը:

Յերբ ջոկը գտնվում է ծածկված տեղում, դասա-կային շրջանի ներսում, վորտեղից ավելի հարմար և հակահարձակման անցնել, ջոկի հրամատարը պար-տավոր է.—

1) ծածկարանի յետևում լավ տեղավորել ջոկը.

2) ցուցումներ տալ այն աշխատանքի համար, վա-րոնք պետք է կատարվեն՝ ավելի լավացնելու (ուժե-ղացնելու) համար ծածկվածությունը.

3) կատարել դեպի դասակի պաշտպանության բո-լոր տեղամասերը յեղած մատուցյների հետախուզու-թյուն.

4) ճիշտ դիտողություն կարգել.

5) հետևել քողարկմանը.

5) նշանակել իրեն տեղակալ.

7) յեթե հարկավոր է—հակադրոհի համար նշան կամ ազդանշան սահմանել:

Ուրեմն յուրաքանչյուր ջոկի հրամատար, ինչ-պես հրաձգային, նույնպես և գնդացրային, դասա-կի հրամատարից հրաման ստանալով, թե իր ջոկը վորտեղ պիտի ամրանա և ինչ խնդիր պիտի կատարի, ամենից առաջ պետք է սկսումնասիրի տեղանքը՝ առջևի յեզրում, թեկերում և թիկունքում:

Առաջամասում և թեկերում կարևոր և պարզել, թե ինչպես հրացանային, նույնպես և գնդացրային ինչ-պիսի գնդակոծում, և ինչքան հեռավորության վրա կրակն իր ուժի մեջ կլինի:

Առանձնապես կարևոր է, վոր յուրաքանչյուր մա-տուցի վրա, այսինքն՝ հակառակորդի անցնելու տեղերի վրա, հնարավոր լինի կենտրոնացնել մի քանի հարեան ջոկերի կրակը: Յերկու յերեք ջոկերի խաչաձև և թեկային կրակն այնքան զորեղ է լինում, վոր կարող է հակառա-կորդին կանգնեցնել մինչև իսկ ամենամոտ տարածու-թյան վրա (150—200 մետր): Պետք է միայն պաշտպա-նությունը կարգավորել այնպես, վոր զանազան տե-ղամասերից լինի մատուցյների փոխադարձ գնդակո-ծում, փոխադարձ կրակային պաշտպանություն: Դրա համար ել ջոկերը դասավորում դասավորվում են առան-ձին խմբակներով, այլ վոչ թե ամբողջ դասավորվ միա-տեղ:

Տեղավորելով յուր ջոկն իրեն ցույց տված կե-տում, ջոկի հրամատարը պետք է նկատի ունենա նաև այն, վոր յեթե հակառակորդը գրավի հարեան ջոկի խրամատը, ապա յուր ջոկի կրակը, հրաձգային թե գնդացրային, պետք է այնտեղ ուղղի: Դա հակա-ռակորդին հնարավորություն չի տա չարժվելու դեպի մեր դասավորության խորքը, այսինքն հաջողություն զարգացնել: Դրա համար ել խրամատները դասավոր-վում են խորքում, այն հաշվով, վոր նրանցից գնդա-կոծվեն վոչ միայն առջևի յեզրում ընկած տարածու-թյունն ու հարեանի առջև յեղած տեղամասը, այլև փոխադարձաբար յուրաքանչյուր խրամատից գնդա-կոծվելին իրենց առանձին խրամատները:

Ջուկի աշակերտի դասավորութիւնը հնարավորութիւն կտա ամբողջ քան համառ կերպով պաշտպանութիւն, այնպէս վոր խրամատներէց մեկն ու մեկը սուղոսկած հակառակորդը մեծ կորուստներ կկրի կենտրոնացած խաչածէ կրակից, և դժվար թե կարողանա այնուհետեւ առաջ շարժուիլ, յետեւ պաշտպանվող հարեւան ջոկերը չվախենան և չհասանջեն:

ՇԵՏԵՎԱԿԻ ԻՍԲԱԿԱՅԻՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ – ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑՆ Ե ՀԱԿԱՌԱՎՈՐԴԻ ՇՐԵՏԱՆՈՒԻԵՄ ԿՈՎԵՆՈՒ ՀԱՄԱՐ

Պաշտպանութեան ժամանակ ջոկերի աշակերտի «ցրված» դասավորութիւնը հարկավոր է լինում նաեւ մի այլ անհրաժեշտութեամբ—հակառակորդի հրետանու դեմ պայքարը:

Հակառակորդի հրետանու դեմ պայքարելու հուշս դնել միայն յուր հրետանու վրա—չի կարելի: Հրետանային կրակի այժմյան հեռահարութեան պայմաններում հակառակորդի հրետանու դեմ յուր հրետանիով կրովելը դժվար է, վորովհետեւ չափազանց դժվար է դռնել ամենուրեք ցրված մարտկոցները և մինչև իսկ հակառակորդի հրետանու դասակները: Դրա համար ել հետեւեղ խուսափելով ամբողջ ճակատով և դեպի խորքը:

Յուրաքանչյուրն, ով յեղել և լավ գնդակործութեան տակ, գիտի, վոր կարծես թե ինչ վոր մագնիս աշուժաժանակ քեզ քաշում է մեջք—մեջքի դեպք թո հարեանը, կարծես թե ամբողջ ուրախ է միատեղ: Իսկ դա շատ վատ է: Ինչքան ամբողջ հետեւեղ կուտակվի մի տեղ, մի կե-


տում, այնքան ամբողջ նրան կիսի հակառակորդի հրետանին, քանի վոր նրա համար նշանը կլինի ամբողջ մեծ, իսկ այդ նշանակում է, վոր ամբողջ կլինի նաեւ կրակի ներգործութիւնը:

Բոլորովին հարկ չկա վախենալու, թե հարեան ջոկը դռնվում է հեռու կամ յետեւում, 50—70 մետրի վրա: Հակառակորդի հետեւեղ յետ կմղես—միայն թե չուտ յեղիր, բայց դրա փոխարեն դու հակառակորդի հրետանային կրակից քիչ կխսում կունենաս, դեռ ուր է վոր հակառակորդի արկը ուղիղ ջոկի խրամատին խփի: Դա շատ քիչ է պատահում: Հազարավոր աշակերտ արկեր ընկնում են քեզանից յետեւ կամ առաջ, կամ ել թո և հարեան ջոկիդ արանքը: Ինչքան փոքր լինի նշանը—խրամատը, այնքան ամբողջ դժվար է նրան խփել: Դրա համար ել, ջոկերի խրամատները ինչքան ամբողջ շատ ցրված լինեն ճակատով և խորութեամբ, այնքան ամբողջ պակաս չափով է վտանգավոր նրանց, համար հակառակորդի հրետանին: Կարեւոր է միայն, վոր ջոկերի հեռավորութիւնը մեկը մյուսից չխանգարի մի ջոկին կրակով ոգնելու մյուսին:

ՆՇԱՆԸ ԶԻՇՏ ՎԵՐՑՆԵՍ—ՇՐԱՋԳՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎԿԻՆԻ

Բավարար գնդակոծ կարելի յե համարել 400 քայրից: Բայց այնուամենայնիվ, ջոկի հրամատարը, յետեւ հնարավոր է, պետք է քայլերով չափի տարածութիւնը մինչև այնտեղ, վորտեղ վոր հասնում յե նրա դեմքի կրակը (հրացան, գնդացիր, ամրոմատ) ինչպէս ճակատի առաջը, նույնպէս և դեպի թեւերը, մինչև հա-

րեանները: Այնուհետև նա պատրաստում է հրաձգային քարտը, այսինքն՝ չափված տարածության տախտակը՝ քայլերով մինչև այս կամ այն նպատակը (տես դժանկար № 5): Յուրաքանչյուր հրաձիգ գիտեմ, թե ինչ հակայական նշանակություն ունի նշանոցը հրաձգու-



ԳՄՆԿ. 5. Հրաձգային քարտ, վորը կազմված է № 4 գծանկարում պատկերացված տեղանքի համեմատ:

թյան ժամանակ: Այստեղ հարկավոր է մեծագույն ճշտություն: Յեթե այդ մասին նախորոք չմտածվի, յերբ դեռ գլխի վրայով չեն սուրում գնդակները, ապա մարտի ժամանակ նշանոցը գտնելը չափազանց դժվար կլինի: Ինչքան ել լավ աչքաչափ լինի—մարտի ժամանակ նրա վրա հույս դնել միշտ չի կարելի: Ուստի պետք է ողտադործել ժամանակը, յերբ հակառակորդը դեռ քեզ չի խանդարում:

Ճիշտ այդպես ել նախորոք պետք է—ճակատային, խաչածե և թեային կրակի մասին պայմանավորվել

հարեանի հետ: Իհարկե, այդ մասին դասակի հրամատարը յուր ցուցումները կտա, բայց պետք է ինքն ել այդ առթիվ պայմանավորվի հարեան ջոկի հրամատարի հետ:

ԳՆԴԱՑԻՐԸ—ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե

Դիրքն ընտրելիս, ջոկի հրամատարը պետք է հիշի, վոր պաշտպանություն ժամանակ հետևակի մարսական կարգի հիմքը հանդիսանում են գնդացիները*) վորոնք դասավորվում են այնպես, վոր առջևում և թեվերում կազմեն փոխադարձ խաչածե կրակային պաշտպանություն: Մի գնդացիի շարքից դուրս գալը դեռ չի նշանակում, վոր խրամատների առջևի և թեների տեղանքի այդ մասում կրակը պետք է լիովին դադարի:

Այդ դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գնդացիների վարպետորեն տեղավորելուն ու քողարկմանը: Չպետք է գնդացիների համար մեծ և հեռավոր նկատվող բույներ լինել: Ավելի լավ է, ութեղ տեխնիկա ունեցող հակառակորդի հետ գործ ունենալիս 2—3 մարդով գնդացիի տեղավորել թիերի մեջ, ավերակ-

*) Անկյունաչափով կրակելիս հաստոցավոր գնդացիի ամենամեծ հասողությունն է մինչև 4 կիլոմետր, նշանոցով կրակելիս մինչև 2300 մետր: Ցածր և ծածկված նշաններին՝ 800 մետրից: Մարտական արագայնությունը մի րոպեյում 250 ձիգ (յուրաքանչյուր յերկու ժապավենից հետո պահանջվում է պաղեցնելու համար փոխել ջրամբարի ջուրը:

Ձեռքի գնդացիի նշանոցային հասողությունն է 1850 մետր: Կրակը ներգործոն է 700—800 մետրից: Մարտական արագայնությունը՝ մի րոպեյում 100—150 ձիգ: Կրակել ընդհատումներով՝ 5—10 վայրկյան:

ներում, փոսում, ամիանգամայն թաղցնելով այն դիտող-
դուրբյունից մինչև այն ժամանակ, յերբ նա կսկսի գոր-
ծել, իսկ գնդացրային ջոկի մյուս մարդկանց պահել
մի կողմում, վորովհետև 7—8 մարդով գնդացիրը
թագցնելը բավական դժվար է: Յուրաքանչյուր գնդա-
ցրի համար անհրաժեշտ է պատրաստել վոչ պակաս
յերկու մակերես (կրակային կետեր), վորպեսզի հե-
տո, ըստ անհրաժեշտության նա մի մակերեսից մյուսը
փոխադրվի:

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՋՈԿՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Յեթե հրաձիգներն ու գնդացրերը տեղավոր-
վելին բաց տեղում, առանց ծածկվելու գետնի մեջ,
ապա հակառակորդը հեշտությամբ կհարվածեր նրանց
հրետանային կրակով: Հակառակորդը միանգամից
կհայտարարեր պաշտպանություններին, կվերցներ ճիշտ
նշանոց և նրա համար դժվար աշխատանք էր լինի յուր
հետևակի համար ճանապարհ մաքրել:

Ուստի, ձեռնամուխ լինելով պաշտպանության,
ամենից առաջ աշխատում է ոգտադործել տեղանքը՝ ա-
վելացնելու համար իր կրակի ուժը և դասավորությունը
բոլոր մարտիկների համար այնպես, վորպեսզի նրանք
ավելի հանգիստ և ամուր կերպով կարողանան պաշտ-
պանվել: Դրա համար ել ինչպես հրաձիգների,
նույնպես և գնդացրերի համար սարքվում են խրամատ-
ներ և արհեստական խոչընդոտներ:

Ինքնախրամատավորման ժամանակ ոգտադործ-
վում են վրան կրելի ամրաշինական գործիքներ, այսին-

քըն՝ փոքրիկ բահ, փոքրիկ կացին և յերկոսին: Բացի
այդ, դիրքերն ամրացնելիս ոգտադործվում է սայրով
կամ այլ միջոցներով տարվող գործիքներ—մեծ (սապ-
յորական) բահ, մեծ կացին և յերկոսին: Մեծ գոր-
ծիքները տրվում են դիրքերին ավագ պետի կարգա-
դրությամբ: Հետը վերցվող գործիքները (փոքր բահ,
կացին կամ յերկոսին) միշտ պետք է մարտիկի մոտ
լինեն: Վերջին պատերազմները ցույց տվին, վոր այն-
պիսի մի վոչ մեծ և պարզ գործիք, ինչպիսին բահն է,
մարտում այնքան արժեքավոր է, վոր քիչ է գիջում հը-
րացանին: Առանց բահի համարյա հնարավոր չէ վոչ
հարձակվել, վոչ պաշտպանվել: Ինչքան մարտիկներ են
իրենց գլուխը դրել միայն նրա համար, վոր մարտից
առաջ քցել են իրենց բահերը (իբր թե ծանր է տանելը):

Բահը—հավատարիմ բարեկամ է, վոր կարող է
քեզ բազմաթիվ անգամներ ոգնել հաղթանակում, բազ-
մաթիվ անգամներ հնարավորություն կտա և՛ կյանքդ
փրկել և՛ կատարել հեղափոխության պաշտպանի քո
պարտքը: Մարտի ժամանակ հետո բահ չունենալով,
դու չես կարող և լավ հրաձիգ լինել, առանց բահի
չի լինի վոչ ծածկարան, վոչ ել հենարան հրաձգության
համար:

խրամատի համար տեղ ընտրելով, պետք է ուշա-
դուրբյամբ նայել, թե առջևում և կողմերի վրա ար-
դյոք վորևէ բան չի խանդարում հրաձգությանը, ինչ-
պես թիփերը, հողակոշտերը և այլն: Յեթե կան այդպի-
սի խոչընդոտներ, բայց չի կարելի խրամատի տեղը
փոխել, ապա գնդակոծումը պետք է հաշվել այնպես,
վոր որինակ թիփերը կտրատվեն: Բջիջի համար տեղ
ընտրելով, հրաձիգը պետք անմիջապես իր ա

ուջ հող կիտի, և դրանով իսկույն և եթ կստանա և հե-
նարան հրացանի համար և ծածկույթ հակառակորդի
կրակից: Հենց դա յեւ կլինի պառկած հրաձգութեան
բջիջը (տես նկար № 6):





ԳՄՆԿ. 6. Պառկած հրաձգութեան բջիջ: Ընդհանուր բարձրու-
թյունը—40 սմտ. հողաթմբի բարձրությունը 20 սմտ. փոսի խո-
րութիւնը 20 սմտ. բջիջի յերկարութիւնը 70 սմտ.ից 1 մետր
(1—1½ քայլ):

Ընտրելով բջիջի տեղը, պետք և նայել, վոր նա
ինչքան կարելի յե քիչ նկատելի լինի հակառակորդին:
Դրա համար պետք և ընդմիջումից անմիջապես հետո
քողարկել այն շրջապատի տեղանքի գույնով, ցել արած
հողով, հողակույտերով, խոտով, ճյուղերով, ավաղ
ցաններով և այլն: Յեթե ժամանակ կա, կամ հակառա-
կորդի կրակն հանգարտել և, պետք և ոգտովել դրանից և
փորել ավելի խորը, մինչև վոր հարմար կլինի կրակել
ծնկանը հենվելով: Այն ժամանակ կստացվի ծնկից հը-
րաձգութեան բջիջ:

Ծնկից յերկար կրակելը հողնեցուցիչ և, զրա հա-
մար եւ առաջին իսկ հնարավորութիւնից բջիջը փորում
են այնքան խորը, մինչև վոր կստացվի կանգնած հրա-
ձգութեան խրամատ:

Յեթե պաշտպանութիւնը յերկարում և և պա-
հանջվում տեղանքում ամրանալ ինչպես հարկն և պ-

մուր, ապա խրամատները կատարելագործվում են: Ա-
ռանձին, մեկական բջիջները միանում են ջոկի խրա-
մատին, ջոկի առանձին խրամատները միանում են իրար
հետ և թիկունքից միացվում են խրամուղիով (տես
նկար № 7): Խրամատներում մարտիկների, զնդացրե-
րի, փամփուշտների տեղավորման և հրաձգութեան բո-
լոր հարմարութիւնների համար շինում են ծածկարան:




ԳՄՆԿ. 7. Զոկի բջիջային խրամատ խրամուղիով: Ներքևում հատ-
հատ բջիջ խրամատում:

Բոլոր դեպքերում խրամատներ սարքելիս պետք և
հիշել քողարկման մասին, այսինքն այն, վոր կառուց-

վածքը նկատելի չլինի վոչ դաշտից, վոչ-եյ վերեւից, քանի վոր հակառակորդը կդիտի վոչ միայն գետնից, այլ և սավառնակից:


Հաստոցավոր և ձեռքի գնդացրային ջոկերի խրամատավորումը կայանում է գնդացրերի համար հարթակ պատրաստելում և ջոկի մարդկանց խրամատավորելում: Նշանառուն և նրա ոգնականը միատեղ մի փոք-



ԳՄՆԿ. 8. Գնդացրային խրամատ պառկած հրաձգության համար

րիկ փոս են փորում, վոր թույլ կտա գնդացրից կրակ մղել սկզբում պառկած (տես նկ. № 8) հետո ծնկից: Փորած հողը լեցնում են առաջ այնպես, վոր գնդացրի համար պատրաստված հարթակի առաջ ստացվի գնդացրին, նշանառուն և ոգնականին ծածկող հողաթուղթ: Ջոկի հրամատարը և հեռաչափը խրամատավորվում են ինքնուրույն, մի փոքր հեռու գնդացրից: Փամփշտակերները նույնպես խրամատավորվում են ինքնուրույն, այնպիսի տեղերում փորտեղ հարմար և իրենց խնդիրը կատարելու համար:

Այդ միջոցը կգործադրվի այն ժամանակ, յերբ հակառակորդը մոտ է, յերբ յուրաքանչյուր ըոպե խրամատները պետք է շատ ավելի պատրաստ վիճակում լի-




ԳՄՆԿ. 9. Գնդացրային խրամատ հրաձգության համար հարթակով և փամփշտաների համար խոռով

նեն և պետքական՝ ոգտադործման համար: Յերբ դեռ հակառակորդը հեռու չէ և ժամանակ կա խսկական խրամատ պատրաստելու, ապա ձեռքի գնդացրի ջոկերի համար սարքում են հրաձգային ջոկի խրամատի նման խրամատ, գնդացրային հարթակներով:

ԱՐԶԵՍԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Վորպեսգի հակառակորդի հարձակումը կանգնեցվի և վորքան կարելի չի հեռու սլահվի նա, խրամատներին մոտենալիս, մեր գնդացրերի և հրաձիգների կրակի տակ խրամատները պատում են արհեստական խոչընդոտներով: Արհեստական խոչընդոտներ լինում են հետևյալները՝ լարափակոցները, խաչափառք հեծանները, վոզնիները, արգելանտառները, գայլադուբերը: Վերջին պատերազմում ամենամեծ գործադրութունը ստացան լարափակոցներն ու խաչափառք հեծանները, վորովհետև փորձը ցույց տվեց, վոր դա խոչընդոտի ամենահարմար և հուսալի տեսակն է: Արհեստական խոչընդոտները թույլ չեն տալիս հակառակորդին անսպասելի կերպով դիչերով յերևալու խրամատների մոտ: Յեթե խրամատների առաջ լարափակոցներ չկան, մինչև անգամ սովորական դիչերներին (եւ չենք ասում աշնանային մուրթ ու ամպամած դիչերների մասին) վոչ մի բուպե հանգիստ չի կարող ունենալ: Իսկ յեթե խրամատներին առաջ լարափակոցներ կան, ապա լարափակոցները մուրթ դիչերը դադոնք դնելով, կարելի չի հանգիստ նստել խրամատներում և շերտափակերում (բլինդաժներում) և հանդատանալ, քանի վոր հակառակորդի համար այնքան եւ հեշտ չի լինի աննկատելիորեն մոտենալ խրամատներին:

Լարափակոցները սարքվում են խրամատի առջևում 40-ից մինչև 125 մետր, մեկ կամ մի քանի շերտ. (տես նկար № 10): Նրանք շինվում են կտրատված դժով այն հաշվով, վոր նրա յուրաքանչյուր կորութունը կարելի



ՊՇՆԿ. 10. Յերե շերտից բաղկացած լարափակոցի ընդհանուր տեսքը:


լինի ամեն ժամանակ գնդակոծել վորպես ավելի ներգործոն կրակ թևային գնդացրային կրակով:

Լարափակոցները լինում են մեկ, յերեք և հինգ ցցափայտերով և սարքվում են այսպես—նախ խփում են մի շարք ցցափայտեր, իրարից $1\frac{1}{2}$ —3 մետր տարածության վրա, մի մետր բարձրությամբ և մոտ 10 սանտիմետր հաստությամբ: Այնուհետև այդ շարքից $1\frac{1}{2}$ մետրի վրա խփվում է ցցափայտերի յերկրորդ շարքը, այնպես, վոր յերկրորդ շարքի ցցափայտերը լինեն առաջին շարքի ցցափայտերի արանքների դիմացը: Հետո ելի յերկրորդ շարքից $1\frac{1}{2}$ մետրի վրա խփվում է ցցափայտերի յերրորդ շարքը, այնպես, վոր յերրորդ շարքի ցցափայտերն ընկնեն յերկրորդ շարքի ցցափայտերի արանքների դիմացը և այլն:

Այսպես աստիճանաբար խփվում են ցցափայտերը, նայած մատերիալի քանակին, ժամանակին և այս կամ այն կետի կարևորության. լարափակոցային ցանցի սահմանված լայնությունը պետք է լինի 6 մետր (6 մատնաչափ արկի առաջացրած ձազարի մեծությամբ): Բայց ձեռնտու յե սարքել այն մի քանի շարք, 3 մետր լայնությամբ, 40 մետրից վոչ պակաս արանքներով, վորպեսզի հրետանին չկարողանա մի նշանով ավերել յերկու շարքն ել: Ցցափայտերին հատուկ յերկաթե ձարմանդներով ամրացնում են փշալարեր: Լարը պետք է ամենից առաջ միացնի ցցափայտերի բոլոր ծայրերը, այնուհետև պետք է մի ցցափայտի վերևից դնա մյուսի հիմքը: Ծայրի շարքերում լարը բացի այդ, միացնում է և ցցափայտերի մեջտեղերն ու հիմքերը: Ցցափայտերի միջև, լարը չպետք է ձգել, քանի վոր ձգված վիճա-


կում նա ավելի հեշտ է կտրվում և կտրատվում է դժբախտներից և քարի կտորներից:

խաչափառք հեծաններով ողավում են այն ժամանակ, յերբ ցցափայտերի վրա ցանց պատրաստելու ժա-



ԳՐԵԿ. 11. խաչափառք հեծաններ.

մանակ կամ կարիք չկա, կամ ել յերբ պետք է դեպի ցանցը ճանապարհը ծածկել. խաչափառք հեծանը—դա



ԳՐԵԿ. 12. Գալթի: Լարափակոցների ուժեղացումը

յերեք պույգ ցցափայտեր են, խաչաձև կապած և ամրացված 10—12 սանտիմետր հաստություն ունեցող մի

ձողի, և ծայրերը լարերով միացած: Խաչափառք հեծան-
ները վորպես փակոցներ ախճան եւ հուսալի չեն, բայց
լավ են նրանով, վոր—1) դրանց կարելի յե արագ և ու-
ղած քանակութեամբ պատրաստել ոժանդակում և ար-
դեն պատրաստ վիճակում հասցնել խրամատները, վոր-
տեղ մնում ե միայն ամրացնել իրար: 2) անցքերի, առ-
հասարակ լարափակոցների արանքների համար: վոր-
պես փակոցներ փաչափառք հեծաններն անփոխարինելի
յին: (Նկար № 11):

ՔՈՂԱՐԿՈՒՄ

Խրամատներ և արհեստական խոշընդոտներ սարքե-
լով, պետք ե դրանք բոլորը քողարկել, ախինքն՝ բոլորը
հարմարեցնել շրջապատող տեղանքի բնույթին: Խրա-
մատներ պատրաստելիս առաջին հերթին պետք ե քո-
ղարկել պատվարը: Հողի թարմ և հարթ շերտը հեռվից
կերևա, դրանով հակառակորդը միանգամից կորոչի
մեր խրամատների ուղղութեամբ և նրա հրետանին ա-
րագորեն կկրակի այդ ուղղութեամբ: Քողարկման հա-
մար պատվարի վրա պետք ե շաղ տալ դարձման կամ
քարեր, կամ հող, կամ չոր ճղներ, նայած շրջապատող
տեղանքի դույնին: Յեթե աշխատանքն արվում ե գիշե-
րով, պետք ե անպայման գիշերվա պատրաստածները
քողարկել, վորպեսզի ցերեկը հակառակորդի աչքին վո-
չինչ չընկնի:

Անհրաժեշտ ե նույնպես քողարկել նաև արհեստա-
կան խոշընդոտները, տեղավորելով նրանց հեղեղատնե-
րից առաջացած փոսերում, վոչ բարձր բույսերում և
այն, բայց անշուշտ այն պայմանով, վոր նրանք լինեն

պաշտպանվողի գնդացրային ներգործոն կրակի տակ
(ամենից լավ ե թեւային կրակի): Չքողարկված լարա-
փակոցներին հակառակորդը հեշտութեամբ և արագ կրա-
կում ե և, իհարկե, շուտով վոչնչացնում ե փակոցները,
նշանակում ե և միանգամից կհեշտացնի յուր հետևակի
դրոհը: Բացի այդ, չքողարկված փակոցներով դժվար
չե իմանալ և խրամատների դասավորութեան ուղղու-
թեամբ:

Լավ ե ցցափայտերը ներկել պաշտպանական կամ
այլ գույներով (տեղանքի գույնին համապատասխան),
յեւի քսիլ և այլն, վորպեսզի լարափակոցները տեղանքի
վրա աչքի չընկնեն, այլ ձուլվեն նրա հետ: Լավ ե լարա-
փակոցները սարքել բարձր խոտի մեջ, թփուտներում և
այլն, բայց պետք ե այնպես անել, վոր փակոցները և
դեպի նրանց մատուցները լավ յերևան մեզ և ամեն բո-
ւոյ կարողանան խրամատներից գնդակոծել (իսկ դա
միշտ հնարավոր ե, յեթե խրամատներն ընկած են փա-
կոցներից բարձր): Լավ սարքել լարափակոցները, ոգո-
վելով կտրտած ծառերի բարձր կոճերով:

Տեղանքին հարմարվելու այդ բոլոր աշխատանքները
պահանջում են ժամանակի և աշխատանքի ահագին
վատնում: Բայց դա ինչքան ել վոր դժվար լինի, ջոկի
հրամատարը պետք ե ինքը հասկանա և յուր հրացա-
նաձիգներին սովորեցնի, վոր խրամատի ամրացման հա-
մար վատնված ժամանակն ու աշխատանքն իզուր չի
անցնի, հենց վոր մարտն սկսվի: Խրամուղու յուրա-
քանչյուր ավելորդ մետրը, յուրաքանչյուր ամրաչինու-
թեամբ, ցցափայտերի յուրաքանչյուր ավելորդ շարքը—
այդ բոլորը փրկում են ջոկի մարտիկների կյանքը:

ՅԵՆԱՄԻՆ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ Ե—ՄԱՐՏԸ ՆՐԱ ՀԵՏ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌՋԵՎՈՒՄ

Հակառակորդի հարձակումն ամենից առաջ պետք է հայտարարել առաջ ուղարկված հետախուզությունը: Հենց վոր ընդհարվում են մեր և հակառակորդի, հետախուզյունները, դրանից ել սկսվում է սլաքարը, վորը տեղում է մինչև վոր հարձակվողը մտնում է պաշտպանվողի արհեստական խոչընդոտների առջևի կրակային վերջին սահմանը:

Հարձակվողը մարտի այդ միջոցին աշխատում է իմանալ պաշտպանվողի դասավորությունը և թուլացնել նրա կրակն այնքան, վոր առանց աչքի ընկնող դոհների հասնի մինչև դրոհը:

Ուստի, զնդնյին, ապա նաև վաշտային հետախուզյունների խնդիրն է—հակառակորդի հետախուզյունների մոտենալիս աշխատել ամեն կերպ խանդարել նրանց և չթողնել մոտենալու իրենց պահպանող դորամասերի դասավորության:

Մեր հետախուզությունը հակառակորդի ճնշման տակ յետ կբաշվի դեպի յուր պահպանող զորամասերը, իսկ վերջինի առաջ կերևան հարձակվողի պահպանությունն ու հետախուզությունը: Հակառակորդի հետախուզությունը կաշխատի յուր վրա դրավել պաշտպանվողի կրակը, և ոգտվելով դրանից տեսնել նրա դասավորությունը: Այդ մոմենտին պաշտպանվողը պետք է ձգտի վորքան հնարավոր է ծածկել իրեն, չհայտարարվելով վոչ կրակով և վոչ ել յենթարկվելով հարձակվողի պահպանության և հետախուզության վորողայթին:

Հայտնվելով ժամանակից առաջ, պաշտպանվողը կհեշտացնի հակառակորդի գործը՝ յուր մասերի վրա ուղղություն տալով նրա գրոհին, դրանով պաշտպանվողը նաև կդնի իրեն հակառակորդի հրետանային կրակի տակ, վորը կվորոնի մեզ, վորպեսզի վոչնչացնի և մաքրի ճանապարհն իր հետևակի համար:

Սակայն, մյուս կողմից, չի կարելի անպատիժ թույլ տալ հակառակորդի հետևակին և հետախուզությանը կիպ մոտենալու դիրքերին և հետախուզելու այն: Հակառակորդի հետախուզյունները և նրա պահպանության փոքր մասերը, վորոնք աշխատում են ներս պրծնել մարտական պահպանության դասավորությունը, զնդապարտական պահպանող ջոկերի կրակով: Զի կարելի բաց թողնել և այն դեպքերը, յերբ կերևան թեկուզ և հեռու, բայց հակառակորդի մեջ ձեռնտու նշանները, որինակ—զորասյուներ, խիտ շղթաներ և այլն:

Հասկանալի չե, վոր այդպիսի դեպքերում պաշտպանվողն այնուամենայնիվ պետք է կրակ բանա, բայց սմեն անդամ պետք է զննել, ձեռնտու չե արդյոք կրակ բանալը թե վոչ: Դա իհարկե, միջին և ավագ հրամկադմի գործն է, բայց ջոկի հրամատարը պետք է այդ մասին իմանա:

Ամենից առաջ կրակ չպիտի բանալ դիրքի այն կետերից, վորտեղից պետք է լինի պաշտպանության մոտակայ, գլխավոր կրակը:

Վաշտի կամ դասակի հրամատարի գործն է բաշխել խնդիրները ջոկերի մեջ, թե ով և վորտեղից պետք է առաջ կրակ բանա հակառակորդի պահպանության և հետախուզության վրա:

... Զոկի հրամատարը, հրացանաձիգներն ու զնդան-
ցորդները պետք է հաստատ հիշեն, վոր Զոկը կարող է
լինել զանազան դրուժյուններում, նա կարող է զանա-
զան խնդիրներ ստանալ, ուստի հարկ կլինի զանազան
վճիռներ ընդունել: Մի դեպքում պետք կլինի 2 կիլո-
մետրի վրա հաստոցավոր զնդացրային կրակ բանալ, մի
ուրիշ դեպքում պետք կլինի սպասել, չնայած ամբողջ
դալթակոթյան, մինչև վոր հակառակորդը մոտե-
նա 200 մետրի վրա և մինչև իսկ ավելի մոտ:

Հետևակային հեռավոր կրակ (2 կիլոմետրից ավե-
լի) բաց են անում միայն հաստոցավոր զնդացրերը, մեծ
մասամբ փակ դիրքերից և ձեռնառու նշաններին: Յեթի
հնարավորութուն կա, դրա համար ողտավետ է հեռա-
վոր զնդակոծության համար հաստոցավոր-զնդացիլը
դնել տների տանիքների տակ, զանգակատներում և այլ
թարձր կետերում: Ճիշտ է, յերբ հակառակորդը մոտե-
նա և հրետանային կրակ բաց անի, չուտով հարկ կլինի
թողնել այդ կետերը, բայց մարտի սկզբում նրանք շատ
ձեռնառու յեն հեռավոր տարածության վրա կրակելու
համար:

Բացի իրենց համար խոշոր նշաններ վերցնող հառ-
տոցավոր զնդացրերից, պետք է յուրաքանչյուր հրա-
ձգային և ձեռքի զնդացրի ջոկում առաջին գծի վրա նշա-
նակել մեկ յերկու լավ հրացանաձիգներ, վորոնք պետք
է բռնեն այնպիսի կետեր, վորտեղից լավ յերևում է
չորս կողմը, (բլուրների լանջերը, տանիքները, ծառե-
րը և այլն) և այնտեղից սակավ, բայց դիպուկ կրակով
խփել հակառակորդի առանձին հետախույզներին և
դետքերին: Դա թույլ չի տա նրանց անպատիժ դիտելու

դիրքը և միաժամանակ նրա ուշադրությունը կղարձնի
զնդացրային ու հրաձգային այն ջոկերից, վորոնք
պաշտպանության գլխավոր ուժն են կազմում գրոհի
դեմ:

Լավ հրացանաձիգների աշխատանքը մեծ նշանա-
կութուն է ունեցել և՛ իմպերիալիստական պատերազ-
մում, և՛ մեր քաղաքացիական կռիվներում, յերբ շատ
հաճախ կռիվը տեղի յեր ունենում բնակված կետերում
և միշտ հնարավորութուն էր լինում նստել վորևէ տեղ
տանիքի վրա:

Իհարկէ, այդ առանձնակի հրացանաձիգների և
զնդացրերի կրակը վերջիվերջո կճնշվի հակառակորդի
կրակով, բայց այնուամենայնիվ այդ հրացանաձիգներն
ու զնդացրերը կարող են շատ մեծ դեր խաղալ, կարող
են հակադրահային պաշտպանության իսկական տեղերի
նկատմամբ հակառակորդին մոլորության մեջ գցել:

Ինչքան ել վոր մենք խորամանկության դիմենք հա-
կառակորդից ծածկելու համար մեր դասավորությունը,
նա վերջիվերջո կստիպի մեր պահպանող մասերին յետ
քաշվել: Առաջին հերթին յետ են քաշվում հրացանա-
ձիգները՝ պահպանող մասերի զնդացրային կրակի
պաշտպանության տակ, իսկ հետո—զնդացրային ջո-
կերը, դասակի հրամատարի նշանակած հերթով:

Դրանից հետո, հակառակորդը կբացի մեր հրաձգա-
յին և զնդացրային խրամատները, բացառութեամբ նը-
րանցից մի քանիսի, վորոնք շատ վարպետորեն են ծած-
կվել դիտողությունից: Ահա այդ մոմենտից ել սկսվում
է պաշտպանողական մարտի ամենածանր շրջանը:

Ձեռքի զնդացրերն իրենց կրակը բաց են անում կեն-
դանի նշաններին, մոտավորապես 800 մետրից: Հրացա-

նային ներգործոն կրակի հեռակայությունից սկսվում է նաև լավագույն հրացանաձիղների կրակը:

ՀՐԱՄԱՏԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԻ ԾԱՆՐ ՄՈՍԵՆՏՈՒՄ

Գտնվելով խրամատներում, տեսնելով իր առաջ 600-800 մետրի վրա հակառակորդի հրացանաձիղների և զնդացրերի վոչ մեծ խմբեր, պաշտպանվող հետևակի գլխին արկերի և զնդացրային զնդակների կարկուտ է թափվում: Փոքրիկ խրամատներն ավերվում են, կապը թիկունքի և հարևանների հետ դժվարանում է: Գնդացրերից և հրացաններից պատասխան կրակ բաց անել յուրաքանչյուր փորձ այդ կետի վրա յե կենտրոնացնում հակառակորդի կրակը: Դա, իհարկե, ազդում է մարտիկների վոգու վրա, նրանց մեջ միտք է հղանում իրենց անողնականության մասին և թուլացնում է նրանց կայունությունը: Յուրաքանչյուր հրամատարի պարտականությունն է առույգ տրամագրություն պահպանել մարտիկների մեջ:

Յուր հրացանաձիղների և զնդացրորդների հետ խրամատում նստած կրտսեր հրամատարի աշխատանքն ու նշանակությունն այդ ժամանակ հսկայական է: Հարկավոր է հրամատարի մեծ տոկունություն, իր ուժերի մեծ լարում՝ պահպանելու համար յուր ստորադրյալների մեջ արիությունը, խնամի նրանց հոգեվոր ուժը և թույլ չտա նրանց հոգեպես ընկճվել: Ձուկի հրամատարը պետք է հիշի, վոր նրա յուրաքանչյուր խոսքը, յուրաքանչյուր շարժումն անգիտակցաբար է ընդունվում առանձին մարտիկների կողմից: Ձպետք է

պարծենալ յուր քաջությամբ, բայց միաժամանակ չպետք է ամենափոքր ակնարկն անգամ անել յուր վրդալմուռների մասին: Այդ ծանր ռոպեներին հանդիստ լինելը ամենաարժեքավոր հատկությունն է յուրաքանչյուր հրամատարի, վորը գտնվում է հենց այդտեղ, մարտիկների մեջ:

Ինձ պատահել է ականատես լինել, յերբ մի վաշտ կարողացել է դիմանալ զնդի մի կարևորագույն տեղամասում շնորհիվ նրա, վոր վաշտի հրամատարը կարողացել է հրետանային սպանիչ հրաձգության տակ պահպանել դասակներից մեկի լավ տրամադրությունը: Տեղավորվելով դասակի խրամատում, յուր գլխավոր տեղամասում, նա վորոտացող արկերի ազդուկի ու շառաչի տակ հանդիստ ձուկ էր կրծում և պատմում էր ամենաուրախ անեկդոտները, մոտենալով դասակի մեկ այս մեկ այն ջոկին: Դասակը դասավորված էր չափազանց կուտակված: Բոլորը տեսնում էին վաշտի հրամատարին հանդիստ, վորպես թե սարսափելի վոչինչ չկա: Իսկ նրա սիրտը մղկտում էր ներսից, ինչպես ինքն էր հետո ասում, բայց այդ վոչ վոք չէր տեսնում:

Յերբ գերմանացիները դուրս յեկան իրենց խրամատներից և գրոհի անցան, մեր կողմից վոչ մի ձայն. գերմանացիները մոտեցան համարյա լարերին, և ահա կառավարի տոնը հաստատուն հրամանի և մեր կողմից կառավարի տոնը հաստատուն հրամանացիներն ընկնում են, հրաձգություն սկսվեց: Գերմանացիներն ընկնում են, փախչում, — ջարդված ու յետ են մղված: Գերմանացիների վրա դա աշխարհի սարսափ ազդեց, վոր այդ տեղամասի վրա այլևս հետևակ չեկավ:

Այս դեպքը վաշտի հետ հնարավոր եր այն ժամանակ, յերբ դասակն ու վաշտը տեղավորված ելին մի խրամատում: Այժմ, հետևակի ներկա «ցվրված» դասավորությունում դասակի հրամատարն ել դժվարությամբ կարող է լինել յուր ջոկերի խրամատներում: Ուստի, պաշտպանողական մարտի ամենածանր մոմենտին այժմ մարտիկները արամադրությունը բարձր պահելու ամբողջ պատասխանատու աշխատանքն ընկնում է կրտսեր հրամկադմի վրա, այսինքն՝ հրաձգային կամ դնդացըսյին ջոկի հրամատարի վրա:

Յեթև ջոկի խրամատին կից «ասպատաններ» կան, սպա ջոկի հրամատարի խնդիրը նշանակալից չափով հեշտանում է, քանի վոր հնարավորություն կա ծածկելու մարդկանց կրակից, հակառակորդին դիտելու համար թողնելով միայն դիտողներին: Այդպիսի դիտող հաճախ հարկ է լինում, վոր հենց ինքը ջոկի հրամատարը լինի, վոր հրավատարը միշտ չի կարող ամբողջովին հույս դնել դիտող-հրացանածիղջների վրա, և մտնել ասպատան, չհետաքրքրվելով թե ինչ է կատարվում վերևում:

Յեթև խրամուղիներ կան, կարելի չե մարդկանց մի մասը թաղցնել այնտեղ:

Հնարավոր է այնպիսի դեպք, յերբ ինչպես ասում են, հրետանային կրակից փրկություն չկա նաև խրամատում: Այն ժամանակ մարդկանց պետք է առաջ տանել դեպի լարավակոցները, իսկ հրետանին թող խփի խրամատին: Իսկ յերբ հակառակորդի հետևակը կշորժվի առաջ, պետք է անմիջապես բռնել խրամատների ավերակները և պաշտպանվել:

Ջոկի հրամատարն այս բոլորը պետք է նախորդ մտածի և ծրագիր կազմի, թե ինչպես, յերբ և ինչ տեղ: Շուտափույթ վճիռները միշտ ել հաջող չեն և հաճախ պատճառ են դառնում մարդկանց ավելորդ զոհերի և մարտը տանուլ են տալիս:

Վոչ մի դեպքում չի կարելի մտածել այն մասին, թե հրետանային կրակից փրկելու համար մարդկանց կարելի չե տանել թիկունք: Ամենից առաջ դա վատ է ազդում հարևանների վրա (իսկույն և եթ կասեն «նահանջում են»—և խուճապ կառաջանա), բացի այդ, արդեն դժվար կլինի մարդկանց նորից յետ վերադարձնել թիկունքից խրամատները, յերբ արդեն հակառակորդը մոտենում է նրանց:

ԿՐԱԿԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի այդ ծանր ժամանակ պետք է ձգտել հարձակվող հակառակորդի հետևակին լուրջ կորուստներ հասցնել, հենց վոր չլթանեն անդուշուրթյամբ յերևիան, նրանց վրա կենտրոնացնելով զնդացիների և հրացանների սաստիկ բռնկումներով կրակը:

Այդ կարճ անկումների պատճառած կորուստները սովորաբար ուժգին կերպով ստեղծում են հաճախվողի վրդին: Միայն չպետք է թույլ տալ, վոր պաշտպանվողի կրակը վերածվի շարունակվող ճարձատյունների, յերբ մարդիկ կրակում են չհարվածելով հակառակորդին, այլ միայն նրա համար, վոր խլացնեն սեփական վախի զգացումը: Պաշտպանվողի հետևակային կրակն այդ ժամանակ պետք է կրի հրացանների և դնդացների ուժգին, բայց կարճ բռնկումների բնույթ: Դա մեծ կո-

բուստներ կատարած հակառակորդին և միաժամանակ շատ տեղերից միանգամից բացվող հրաձգության դեպքում հակառակորդը խիստ դժվարանում է վորոշել բոլոր այն տեղերը, վորտեղից նրա վրա կրակում են:

Հակառակը—ամեն մի շարունակվող հրաձգություն առանց վորևե ձեռնտու նշանների, այլ լուի հակառակորդի սլառկած շղթաներին—չեն հասցնի նրանց եյական կորուստներ, այլ միայն նրանց կիրախուսեն նրանց իրենց անուժությամբ, կողմեն հակառակորդին պաշտպանվող ջոկերի դիրքերի հետախուզություն կատարել: Այդպիսի կրակ յերբեք չպիտի թույլ տալ:

Լավ հետևակը, ինչպես ասում են «ժլատ և կրակի նկատմամբ», մարտը վերցնում է վոչ թե արձակած զնդակների քանակով, այլ վորակով. այսինքն յուր հրաձգության գիսակությամբ:

Ինչքան ավելի հակառակորդը շատ մոտենա պաշտպանվողի խրամատներին, այնքան ավելի լարվածություն է մարտիկների մեջ: Հակառակորդի հրետանային կրակն սկսում է ավելի կատաղաբար տեղալ խրամատների վրա: Հակառակորդն ահա շուտով կանցնի գրոհի: Առանձնապես այդ մոմենտին չպետք է զրավել հակառակորդի հետ կրակում մրցելով, այլ պահվելով խրամատում ուշադիր հետևել, թե հակառակորդի շղթան յերբ է բարձրանում գրոհի համար, և այն ժամանակ խորտակել նրան իր կրակով:

Յերբ հակառակորդը մոտենում է մինչև հաստոցավոր զնդացրային կրակի հեռակայությունը, զնդացրերը զնդային և դումարտակային հրետանու հետ միասին իրենց կրակը կենտրոնացնում են գլխավորապես դեպի հակառակորդի հետևակային հրանոթները,

նրա զնդացրերը և ոժանդակը: Ձեռքի զնդացրերը, նոնաձիղները և լավագույն հրացանաձիղներն արգելում են հակառակորդին կուտակվելու վերջին սահմանագծում: Դաշունահար*) հաստոցավոր զնդացրերը, ձեռքի զնդացրերի մի մասը և հրաձգային ջոկերը մինչև գրոհի սկիզբը կրակ չեն բաց անում, վորպեսզի ի հայտ չբերեն իրենց դասավորությունը:

Գրոհի մոտեցման նշաններ պիտի համարել այն մոմենտը, յերբ հակառակորդը մոտեցել է 150—200 մետրի վրա և յերբ հակառակորդի արկերը մեծ քանակությամբ թռչում են պաշտպանվողի առաջին դժի դիսի վրայով: Սակայն, դա միշտ էլ ճիշտ լինել չի կարող, վորովհետև հակառակորդը յերբեմն ուղղում է, վոր պաշտպանվողը բռնի յուր տեղերը հրաձգության համար և կրակ բաց անի, չսպասելով գրոհի և այն ժամանակ հակառակորդի հրետանին կրկին տեղում է պաշտպանվողի կենդանացած խրամատների վրա:

Յերբեմն նրա համար, վոր պաշտպանվողը կրակ բաց անի, գրոհողն ուղարկում է առաջ առանձին հետախուզիչների: Պաշտպանվողը չպետք է յենթարկվի

*) Դաշունահար զնդացրերը—զրանք այն զնդացրերն են, վորոնք նախորդ սահմանված են մի վորոշ նշանի համար, որինակ, լարափակոցների առջևի ձորակի վրա: Այս զնդացրերը հարվածում են միայն կարճ (200—400 քայլ) տարածության վրա և միայն այն ժամանակ, յերբ հակառակորդն անցնում է նախորդ վորոշված նշանը: Դաշունահար զնդացրերը մինչև կրակ բաց անելը պահվում են ծածկված, լավ քողարկված նրանք ամբողջ ժամանակ լուռ են, չնայած հակառակորդի հարձակման, չնայած մյուս զնդացրերի և մինչև անգամ հրացանաձիղների կրակին, և դրա համար էլ ոտարերկրյա մի քանի բանակներում նրանց այդպես էլ կոչում են «լուսկյաց զնդացրեր»:

այդ վորոգայթին, այլ հետախույզներին յետ մղի մի-
այն առանձին հրացանաձիգների կրակով, խնայելով իր
գնդացրերն ու այլ հրացանաձիգներին մինչև այն ժա-
մանակ, յերբ գրոհող հետևակի խմբերը կկանգնեն ամ-
բողջ հասակով և կշարժվեն առաջ: Այդ խմբերը պետք
և գնդակոծվեն գնդացրերի, ավտոմատ-հրացանների,
հրացանների և ձեռքի նռնակների ամենաներգործոն կը-
րակով: Այդ մոմենտին ով ուզում է լինի խրամատում,
բոլորն էլ հրացան են վերցնում, բոլորն էլ կրակում են,
բոլորն էլ հայտաբերում են գերազույն յեռանդ:

Դա ամենապատասխանատու մոմենտն է պաշտպան-
վողի առաջին դժի համար, և դրա համար ել բոլորը
պետք է աշխատանքի կաշեն: Մտածել այդ մոմենտին
խրամատներից փախչելու մասին, դիմադրությունից
հրաժարվելու, չնշառման մասին—այդ նշանակում է
վոչնչացման յենթարկել խրամատների բոլոր պաշա-
պաններին: Հակառակորդը կաքավների նման կգնդա-
կահարի բոլորին, յեթե այդ մոմենտին ցույց տաս նրան
քո թիկունքը: Իսկ մնալով խրամատում և դրոհի համար
վտռք յեկած հակառակորդի վրա գնդակների կարկուտ
տեղալով կորուստներ կհասցնես նրան, կկանգնեցնես,
վորով կկատարես քո պարտքը յերկրի հանդեպ և ինքդ
ել կենդանի կմնաս: Զորքերն ամենից ավելի կորուստ-
ներ են ունենում այն ժամանակ, յերբ նրանք նահանջում
են, փախչում են հարձակվող հակառակորդից: Հար-
ձակվողը տեսնելով, վոր իր առաջից փախչում են,
խրախուսվում է, ավելի համարձակ է հարձակվում և
ավելի դիպուկ է կրակում: Ընդհակառակը, գրոհի
անցնելով և ընկնելով պաշտպանվողի մահա-
բեր կրակի տակ, հարձակվողը սարսափահար կլինի,

նա չի դիմանա: Մեկ վոր փորձում և դրոհի անցնել,
իսկ հետո պառկում է կամ փախչում է դեպի յետ, ինչ-
պես վոչխարի հոտ,—դու այդ ժամանակ վերջ
տուր նրան:

ՈԳՆԵԼՈՎ ՀԱՐԵՎԱՆԻԴ, ՓՐԿՈՒՄ ԵՍ ՔԵԶ

(Կոիվը պաշտպանության շրջանի ներսում)...

Այն դեպքում, յերբ հակառակորդը գրավել է վորևի
ջոկի խրամաքը, հարևան ջոկի մարտիկները պետք է
հասկանան, վոր այդ նրանց ամենևին իրավունք չի տա-
լիս թողնելու իրենց խրամատները: Նրանց նպարտքն է—
պաշտպանվել իրենց խրամատներում և իրենց կրակով
ողնել հարվածային խմբին դուրս չարտելու ներս պըր-
ծած հակառակորդին: Նրանց փրկությունն է—դուրս
նետել հակառակորդին: Մարտի այդ ծանր մոմենտին
նահանջելով, թիկունք փախչելով քեզ չես փրկի և մար-
տին ել տանուլ կտաս:

Փորձառու մարտիկները, վորոնք անցել են այդ
բովով, մինչև անգամ յերբ այդ մոմենտին հրաման եր-
զալիս յետ քաշվել, մեծ դժկամակությամբ եյին թող-
նում իրենց խրամատները: Նրանք միանգամայն գործ-
նականորեն նկատում եյին թե—«ինչ վոր այժմ թողնում
ենք, մեկ կամ յերկու ժամ յետո պետք է կրկին վերց-
նենք, իսկ այստեղ կնստի հակառակորդը»: Հաճախ
այդպես ել լինում է: Իսկ վերցնել այն, ինչ վոր թշնա-
մին կարողացել է գրավել, դժվար է: Թշնամին խրա-
մավել է, նա տեսել է, վոր իր առաջից նահանջել են,
ամրացել և և համարձակ յետ է մղում նրանց, ովքեր
ուզում են յետ վերցնել այն խրամատները, վորոնք քիչ
առաջ թողնվել են:

Նստելով խրամատներում, խրամուղիներում, գլխափածիր ներս պրծած հակառակորդի թևերն ու թիկունքը: Քաջերի մի փոքրիկ խումբ կարող է մարտի հետագա ընթացքի համար մեծ գործ կատարել, հակառակորդին հնարավորություն չտալ տարածվելու դեպի թիկունքը, ժամանակ շահելով իրենց հարվածային խմբերի մոտեցման համար, վորոնցով հակադրոհը նշանակալից չափով հեշտացած կլինի, յեթե հակառակորդը չի կարողացել լիկվիդացիայի յենթարկել առաջին դժի թեկուղ մի քանի ջոկերի դիմադրությունը:

Յերբ հակառակորդին հաջողվում է մտնել պաշտպանության շրջանը, սկզբում նա սովորաբար գտնվում է ծանր վիճակում: Նախ նրա շարքերը քայքայված են, նրան թվում է թե ամենուրեք դարան են մտած, և հայտնի չէ վորտեղ են յուրայինները և վորտեղ են ուրիշները: Յերկորդ, այդ ժամանակ նա կորցնում է կապը յուր հրետանու հետ, վորն այնպես ողնում եր նրան հարձակվելիս: Պաշտպանվողը պետք է անպայման ուղտվի այդ դրությունից հակադրոհի համար:

Սովորաբար հակառակորդի առաջին հաջողությունները կկայանան պաշտպանողական շերտի առջևի յեզրի առանձին կետերի գրավելում: Մարտի այդ շրջանում, մեծ մասամբ հակառակ լանջերին տեղավորված հրաձգային ջոկերը պետք է հակադրոհով վռնչացնեն ներս պրծած հակառակորդին, փրկելով դրավված կրակային կետերը:

Հակառակորդի կողմից դրավված պաշտպանության առանձին շրջանները (վաշտային, դասակային), պետք է տրկունությունաբ դիմանան, հարվածելով հակառակորդի թևին:

Այդ մոմենտին յուր մարտիկները պետք է ձգտեն նրան, վորպեսզի հակառակորդին հնարավորություն չտան հաջողությունը դարգացնելու և ամրանալու: Այդ մոմենտին առանձնապես կարևոր է, վոր հնարավորին յափ ափելի կրակային կետեր պահվեն առջևում, ներթուօած հակառակորդի թևերին ու թիկունքին ուղղված կրակով ողնություն ցույց տալու համար յուր հարվածող խմբակի հակահարվածին:

Յեկ այդպես, պատրաստվելով պաշտպանության, մի մտածիր, վոր դա լոկ խրամատներում նստել է նրա շանակում: Պաշտպանվելով հաղթանակի հասնելու համար պահանջվում է մեծ կայունություն, սառնարյունություն, հանրապետության և ընկերների առաջ յուր ունեցած պարտքի գիտակցություն: ջոկերի փոխադարձ պաշտպանությունը, փոխադարձ հավատը մեկը մյուսի նկատմամբ—ահա հաստատ գրավականը նրա, վոր ինչքան ել թշնամին ուժեղ լինի յուր տեխնիկայով, յուր մեքենաներով, նրան կարելի յե ջախջախել:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՇԵՐՈՎ

Գիշերային մարտեր լինում են այն ժամանակ, յերբ հարձակվող կողմը ցերեկով վոչինչի չի կարող հասնել, կամ ել նախորդը վճռում է վոր ցերեկով վոչինչ չի կարող շահել:

Յերեկվա մարտում հարձակվողի համար սարսափելի յեն գնդացրերը, ավտոմատները, հրետանին, սալառնակները և այլն: Գիշերային մարտում այդ միջոցները մեծ չափով կորցնում են իրենց մահաբերությունը, վորովհետե կրակողը շատ վառ է տեսնում թե վորտեղ է ընկնում: Բայց շնայած գիշերային մարտի

չափողութեան, վոչ բոլոր հետեակներն են ընդունակ գիշերային գրոհ կատարելուն: Գիշերով գրոհելու համար հարկավոր է մեծ պատրաստութիւն, զորվածութիւն և զորամասերի տոկունութիւն: Յեթն պաշտպանողը գիշերը յուր կրակի ներգործութեան պակասելու համար շատ բան է կորցնում, ապա հարձակվողն իր կրակի վրա բոլորովին հույս դնել չի կարող: Գիշերով գրոհողը պետք է հենվի միայն յուր հետեակի և հետեակային զենքի վրա, այն, ինչ վոր հետեակը կրում է իր հետ: Իսկ քանի վոր հարձակվողի համար գիշերային մարտի դիմաւոր գերակշռութիւնը—դա գրոհի հանկարծակիութիւնն է, ապա մինչև իսկ հետեակային զենքը ևս պետք է լռի, նպատակ ունենալով ծածկարար մոտենալ հակառակորդին:

Այդպես մեր կարմիր զորամասերը գրոհեցին Պերեկովի վրա, վրանդեւականներին 1920 թվի նոյեմբեր 7-ին լույս 8-ի գիշերը և դուրս չարտեցին աֆտեղից ուղիտակ զվարդիականներին, չնայած նրան, վոր սպիտակ զվարդիականները բռնել էին ամուր գիրքեր: Լռութեամբ ու կարգով կարմիր հերոսները մոտեցան հակառակորդի դիրքերին և սվիններով վռնդեցին սպիտակ զվարդիականներին: Կարգապահութիւնը, կայունութիւնը, հավատը մեծ գործի և յուր ուժերի նկատմամբ հնարավորութիւն տվին կարմիր հերոսներին գիշերվա հովանավորութեան տակ մարտական մեծագույն հերոսութիւն կատարել:

Իմանալով այդ բոլորը, անհրաժեշտ է պաշտպանութեան ժամանակ ձգտել նրան, վոր գիշերով հանկարծակի հարձակումն անհնարին լինի: Դրան կարելի չէ

հասնել պահպանութիւնն ու հետախուզութիւնը ճիշտ դնելով, գործադնելով լուսավորող միջոցներ, կապի (լույսային, հեռախոսային, հնչունակ) ճիշտ և հուսալի աշխատանքով: Այդ բոլորը յուր ժամանակին գործերին նախագիւշացնում են հարձակումներից, կրակից և այլն:

Պատրաստվելով գիշերվան, ամենից առաջ անհրաժեշտ է ձեռք առնել պահպանութեան հարկավոր միջոցները: Դասակի հրամատարը գիշերվա պահպանութեան մասին ցուցումներ է տալիս ջոկերի հրամատարներին: Անհրաժեշտ է միայն ամենայն լրջութեամբ վերաբերվել մարդկանց վերակարգումին և պահպանութեանը: Անիույթ վերաբերմունքը պահպանական ծառայութեան պարտականութիւններին, առանձնապես գիշերը—դա ամենաժանր վտանգալիցութիւնն է, դրանով դու հակառակորդի սվինի և գնդակահարութեան տակ ես դնում քո ջոկն ու հարեաններին:

Դեպքեր են յեղել, յերբ հակառակորդից համարձակների մի փոքրիկ խումբ անցնելով մեր պահպանող հերոսները, խուճապ է առաջացել և կորուստներ է հասցրել մեզ: Գիշերով առաջացած խուճապը կարող է մինչև իսկ մեր զորամասերն ընդհարել մեկը մյուսին, վորն անտեղի զոհերի պատճառ կդառնա:

Դնելով գաղտնքներ ու պոստեր, հարկավոր է նրանց շուտ շուտ ստուգել: Ժամապահների արթնութիւնն ստուգելու և հարեանների հետ կապ պահելու համար նշանակված դետեքը պետք է լավ տանն իրենց ծառայութիւնը, վորովհետև նրանց նշանակութիւնն էլ նույնն է ինչ վոր ժամապահներին:

Յերեկոյան անհրաժեշտ է պայմանավորվել հա-
րևանների հետ, թե գիշերը հակառակորդի հարձակ-
ման դեպքում ով և վորտեղ պիտի կրակի: Անհրաժեշտ
է պարզել դասակի հրամատարի մոտ, թե գիշերը
ջուրը (գնդացրային կամ հրաձգային) ինչ խնդիր պիտի
կատարի, ում կարգադրութեամբ պետք է կրակ բաց
անել և ինչ նշանով պետք է սկսել ու դադարեցնել այդ
կրակը, հակառակորդի գիշերային հարձակման համար
ինչ նախազգուշացնող ազդանշաններ են սահմանված:

Գնդացրերը պետք է ուղղված լինեն վորոշ
ուղղութիւնների վրա վոչ մեծ հեռակայու-
թյան վրա: Մեծ հեռակայութեան վրա հար-
կավոր չի խփել, վորովհետև գիշերային մար-
տում հատկապէս կարևոր է «անդրանցում» (գըն-
դակների վերեւից անցնելը) չլինի: Հարձակվող հա-
կառակորդն զգալով, վոր գնդակները թուգում են իրենց
վրայով, կխրախուսվեն և համարձակ կզան թո վրա:
Միանգամայն այլ կլինի, յեթե հակառակորդն զգա,
վոր գնդակներն ընկնում են իրենց առաջ: Այդ մասին
նրան իմաց կտան գնդակների անդրադարձումները (ռի-
կոչեա), նա չի դիմանա, կպառկի և կսկսի կրակել: Իսկ
յեթե գիշերը գրոհող հետևակը պառկում է և կրակում,
կնշանակի գրոհը համարյա անհաջողութեան է մատ-
նւում: Պաշտպանվողը կարող է պատրաստվել հակա-
հարձակման, բոլոր մարտիկները կկանգնեն իրենց տե-
ւերում, կրակներից կիմանան վորտեղ է հակառակոր-
դը և յուր հրետանին կոգնի յետ մղելու գրոհը:

Եթե գիշերը հրացանաձիգների վրա ընկնում է
պաշտպանութեան և կապի ծառայութեան ամբողջ ծան-
րութիւնը, ապա գնդացրորդները պետք է ամբողջ գի-

շերը լինեն պատրաստ, գնդացրերի մոտ, հերթով փո-
խելով իրար. վոչ մի րոպե գնդացրերը չի կարելի թող-
նել առանց գնդացրորդի: Բոլորն ինչ վոր պետք է
գնդացրի համար, պետք է յերեկոյից դրված լինի վո-
րոշ տեղում, բոլոր մարդիկ պետք է ստուգվեն իրենց
պարտականութիւններն իմանալու մեջ: Լավ է յուրա-
քանջուր հաստոցավոր գնդացրի մոտ ունենալ Կլե-
տրական լապտեր:

Վորպեսզի գիշերային գրոհը հանկարծակի չլինի,
անհրաժեշտ է պարտականութիւնների ճիշտ բաշխում
անել: Պետք է ճշտութեամբ ցույց տրվի, թե ում և վոր-
տեղ կարելի չէ հանդատանալ, և ինչ անել հակառակոր-
դի գրոհի դեպքում: Շատ ոգտակար է ստուգման հա-
մար գիշերային տաղնապներ սարքել:

Հիշելով, վոր մի պոստի կամ մի դիրքի բերան-
բացութեան, քնկոտութեան պատճառով կարող են
կորստյան մատնվել տասնյակ և հարյուրավոր ընկեր-
ներ, պետք է գիշերային մարտական ծառայութիւնը
ճիշտ տանելու պահանջների նկատմամբ լինել խիստ
և կայուն:

Ինքը ջուկի հրամատարը պետք է միշտ տեղակալ
ունենա, վորի հետ և կրածանի յուր ծանր, պատասխա-
նատու, բայց պատվավոր մարտական ծառայութիւնը:

Հակառակորդի հարձակումը հայտնի լինելիս,
պաշտպանութեան մշակված ծրագրին համապատաս-
խան, կրակային խմբերը պատրաստվում են մարտի:
Առաջ ուղարկված մասերը (հետախուզութիւնը, դետ-
քերը, դադոնքները) յետ են քաշվում վորոշ ուղղու-
թեամբ նախորդը նրանց համար նշանակված կետերը,
վորպեսզի իրենց պաշտպանողական շրջանից չփակեն

կրակը: Առջևի տեղանքն ուժգնությամբ լուսավորվում
և հրթիռներով, իսկ յեթե կարերի յե՝ լուսարձակներով:
Պաշտպանության հրետանին կրակ և բաց անում հա-
կառակորդի հարձակվող զորամասերի վրա: Գնդացրա-
յին կրակ բաց և արվում այն ժամանակ, յերբ դրո-
հողը մոտենում է հրացանային ուղղակի կրակի հեռա-
վորության վրա: Յերբ հակառակորդը դեմ կառնի ար-
հեստական խոչընդոտներին, ապա ամենից լավ է զնդա-
կոծել նրան այդ ժամանակ ամբողջ յերկարության
կրակով:

Հրաձգային ջուրը կրակին մասնակցություն չի ու-
նենում, այլ բռնում է այնպիսի տեղ, վորտեղից կարե-
լի յե արագ հակադրոհի անցնել հակառակորդի թևը,
յերբ վերջինս գրավում է կրակային կետերը:

Հրետանին և զնդացրերը միշտ կարող են յետ մը-
ղել գիշերային դրոհը, բայց դրա համար անհրաժեշտ է
վոր նրանց կրակը բացվի յուր ժամանակին. իսկ
կրակը յուր ժամանակին կբացվի այն դեպքում,
յեթե պահպանվող մասերը (հետախուզությունը, դետե-
քերը, դաշոնքները) այնքան ուշիմ կլինեն, վոր կկարո-
ղանան պարզել վուչ միայն հակառակորդի հարձա-
կումը, այլև թե վորտեղ և հարձակվող հետևակի
գլխավոր ուժը: Յեթե ժամանակակից մարտի հաջողու-
թյունն ընդհանրապես կախված է հետևակի և հրետա-
նու կապից, ապա դա առանձնապես պետք է ընդգծել
գիշերային մարտի համար:

Յերեկը հրետավորն ինքը չառ բան է տեսնում
թե վորտեղ և ամենից առաջ պետք հրետանու ոգնու-
թյունը, իսկ գիշերը հրետավորը կարող է կրակել այն-

տեղ, վորտեղ հետևակը յուր յատ, վորտեղ նա կը-
հաւտաբերի հակառակորդի հարձակումը:

Իսկ հակառակորդի մասին ամենից առաջ կիմանան
հետևակի պահպանող մասերը և վորոնք ել պետք է
իրենցից մոտիկ հրամատարի միջոցով յուր ժամանա-
կին նախադրույալացնեն հրետանուն:

ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թե ինչպիսիք են լինում պայքարի քիմիական մի-
ջոցները, յուրաքանչյուր կարմիր բանակային և հրա-
մատար պետք է իմանա, ուստի մենք կշռափենք
միայն ամենագլխավորները—ինչ պետք է անեն և
ինչի մասին մտածեն ջուրի հրամատարն ու հրացա-
նաձիգները՝ ձեռնամուխ լինելով պաշտպանության:

Պայքարի քիմիական միջոցները կարող են հակա-
ռակորդի կողմից գործնեության մեջ դրվել, հենց վոր
նա իմանա մեր մասերի տեղը և ուարդի նրանց դասավո-
րությունը:

Հակառակորդը գագ կարող է բաց թողնել միայն
դեպի մեզ փչող քամու դեպքում, և դրա համար ել,
այդ ժամանակ սահմանվում է հակառակորդի առաջա-
վոր խմբերին և առանձնակի մարտիկներին հետևող
դիտողություն: Հակառակորդի մինչև 400 մետրի վրա
մոտենալու դեպքում արդեն անհրաժեշտ է քիմիական
հարձակման դեմ պաշտպանական միջոցների դիմել:
Այդ տարածությունից արդեն կարելի յե սպասել քիմի-
ական հրացանային նռնակների անսպասելի գնդակո-
ծում: Պաշտպանվողի խրամատները քիմիական նռնակ-
ներ նետելով, հակառակորդը կարող է ոգտվել հակա-

պագեր հազնելու պատճառով կրակի դադարումից և առանց կորուստների գրոհել ջոկին: Դրա համար ել յերբ հակառակորդը մոտենում է 400 մետրի վրա, չի խանդարում առանձին զնդացրորդներին (1-2 հոգի հաստոցավոր զնդացրերի մոտ) հազնել հակազուգեր, յեթե մինչև իսկ քիմիական հարձակում չկա: Այդ դեպքում անսպասելի քիմիական հարձակման ժամանակ, թեկուզ մի զնդացրորդ կարող կլինի շարունակել կրակը գրնդացրից, մինչև վոր մնացածները նույնպես կհանգնեն հակազուգերը:

Քիմիական պաշտպանության ծրագիրը կազմելիս հրամատարը պետք է մտածի գազային տազվապի մասին: Ինքը հրամատարը պետք է ստուգեն իմանա, թե ավագ պետի կողմից ինչ ազդանշան է սահմանված դրային տազնապի համար:

Գաղային տազնապ կազմակերպելիս եյական նշանակութուն ունի զորքի յուրաքանչյուր խմբում հատուկ որավորակների վերակարգումը, վորոնց պաշտականություններն մեջ պետք է մտնի ընդունել ազդանշանները և հանձնել իր զորամասին: Առանձնապես դա կարևոր է, յերբ մարդիկ տեղավորված են շերտավակերում, ապաստաններում և ընդհանրապես փակ տեղերում:

Քիմիական հարձակման դեպքում, ինչպիսի միջոցով ուզում է նա լինի (զազեր, քիմիական նռնակներ, սավառնակից նետովող քիմիական ուռմբեր), ամենահուսալի միջոցը հակաքիմիական պաշտպանության համար հանդիսանում է իսկազազը, կարողանալով արագ և ճիշտ հազնել այն, առանց դես ու դեն ընկնելու: Այդ կարելի յե լիովին անել, լավ զնելով քիմիական

պահպանության ծառայությունն ու դիտողությունը և կազմակերպված քիմիական տազնապը:

Ցերեկ թե գիշեր, ամեն ժամանակ հակազազը պետք է լինի մարտիկի այնպիսի անրաթանելի պատկանելիք, ինչպես և նրա հրազները:

Գաղազնդային և թունածխային գրոհի ավելի հավանական ժամանակը պետք համարել գիշերվա յերկրորդ կեսը, շատ չմնացած գիշերից կամ ուղղակի լուսաբացից առաջ: Ուստի ջոկի հրամատարը յերեկոյից պետք է ստուգի հակազազերի առկայությունն ու սարքին լինելը, հետևելով բացի այդ նրան, վոր հակազազերը միշտ գտնվեն մարդկանց մոտ:

Քիմիական գաղոնքները քիմիական հարձակման կասկածելի նշաններ յերեւալիս տալիս են տազնապի սահմանված ազդանշանները, վոր ընդունվում են բոլոր որավորակաների կողմից և հանձնվում թիկունքին ու թևերին: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, վոր ավելի լավ է ավելորդ սխալ տազնապը, քան թե վախենալով սխալից բաց թողնել իսկապես սկսված գրոհը:

Գաղային հարձակումից նախազգուշանալու համար ոգտվում են զանազան ոժանդակ միջոցներից: Գաղից նախազգուշանալու ավելի հուսալի միջոց է հանդիսանում՝ այդ գործին պատրաստվող այն մարդկանց զարգացած հոտառությունը, վորոնք պետք է զնան առաջ կամ հետախուզության և պետք է հայտարերեն թունավոր նյութերի մոտենալը: Բացի այդ, գոյություն ունեն հատուկ գործիքներ (ոդերեւութաբանական) վորոնց ոգնությամբ կարելի յե հետևել քամու կայու-

գազեր, հագնելու պատճառով կրակի դադարումից և առանց կորուստների գրոհել ջրկին: Դրա համար էլ յերբ հակառակորդը մոտենում և 400 մետրի վրա, չի խանդարում առանձին զնդացրորդներին (1-2 հոգի հաստոցավոր զնդացրերի մոտ) հագնել հակազազեր, յեթև մինչև իսկ քիմիական հարձակում չկա: Այդ դեպքում անսպասելի քիմիական հարձակման ժամանակ, թեկուզ մի զնդացրորդ կարող կլինի շարունակել կրակը դռն-դացրից, մինչև վոր մնացածները նույնպես կհանդեն հակազազերը:

Քիմիական պաշտպանության ծրագիրը կազմելիս հրամատարը պետք է մտածի գազային տագնապի մասին: Ինքը հրամատարը պետք է ստույգն իմանա, թե սովադ պետի կողմից ինչ ազդանշան է սահմանված դուրսից տագնապի համար:

Գազային տագնապ կազմակերպելիս եյական նշանակութուն ունի զորքի յուրաքանչյուր խմբում հատուկ որավորակները վերակարգումը, վորոնց պաշտպանությունների մեջ պետք է մտնի ընդունել ազդանշանները և հանձնել իր դորամասին: Առանձնապես դա կարևոր է, յերբ մարդիկ տեղավորված են շերտափակելում, ապաստաններում և ընդհանրապես փակ տեղերում:

Քիմիական հարձակման դեպքում, ինչպիսի միջոցով ուզում է նա լինի (զազեր, քիմիական նռնակներ, օսվառնակից, նետվող քիմիական ուռմբեր), ամենահուսալի միջոցը հակաքիմիական պաշտպանության համար հանդիսանում է հակազազը, կարողանալով արագ և ճիշտ հագնել այն, առանց դեռ ու դեն ընկնելու: Այդ կարելի չէ լիովին անել, լավ դնելով քիմիական

պահպանության ծառայությունն ու դիտողությունը և կազմակերպված քիմիական տագնապը:

Ցերեկ թե գիշեր, ամեն ժամանակ հնկադարը պետք է լինի մարտիկի այնպիսի անրաժանելի պատկանելիքը, ինչպես և նրա հրազենը:

Գազազնդային և թունածխային գրոհի ավելի հավանական ժամանակը պետք համարել գիշերվա յերկրորդ կեսը, շատ չմնացած գիշերից կամ ուղղակի լուսաբացից առաջ: Ուստի ջրկի հրամատարը յերեկոյից պետք է ստուգի հակազազերի առկայությունն ու սարքին լինելը, հետևելով բացի այդ նրան, վոր հակազազերը միշտ գտնվեն մարդկանց մոտ:

Քիմիական դաղոնքները քիմիական հարձակման կասկածելի նշաններ յերեալիս տալիս են տագնապի սահմանված ազդանշանները, վոր ընդունվում են բոլոր որավորականների կողմից և հանձնվում թիկունքին ու թևերին: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, վոր ավելի լավ է ավելորդ սխալ տագնապը, քան թե վախենալով սխալից բաց թողնել իսկապես սկսված գրոհը:

Գազային հարձակումից նախադեռնանալու համար ոգտվում են դանադան ոժանդակ միջոցներից: Դադից նախադեռնանալու ավելի հուսալի միջոց է հանդիսանում՝ այդ գործին պատրաստվող այն մարդկանց զարգացած հոտառությունը, վիրոնք պետք է զնան առաջ կամ հետախուզության և պետք է հայտաբերեն թունավոր նյութերի մոտենալը: Բացի այդ, գոյություն ունեն հատուկ գործիքներ (ողերևութաբանական) վորոնց ոգնությամբ կարելի չէ հետևել քամու կայու-

նության, ուժին և ուղղությանը, և նշանակում է, ներանց ոգնությամբ կարելի յե նախորոք պարզել գերբերի այն տեղափոխությունը, վորտեղի վրա սպառնում է մեզ դադային վտանգը:

Յերբ դադադեակային գրոհը հայտնի յե դառնում, կամ ել պաշտպանության շրջանն սկսվում է գնդակոծվել քիմիական արկերով, քիմիական ուժերով, կամ քիմիական նոնակներով, բոլորը մնում են իրենց տեղերում, հակադադերը հաղած, պատրաստ հանդիպելու հակառակորդին կրակով, նոնակներով և սվիններով: Գազերից փախչելն անոգուտ է: Նրանք այնքան արագ են շարժվում, վոր մեկ է, նրանցից չես փախչի, այլ միայն շնչակտուր կլինես վազքից, ծանր կլինի շնչել, կպատռես հակադադը, և այն ժամանակ—վերջ: Տեղումդ մնալով հանդիստ հակադադի մեջ դու կատարում ես պարտքը և միանգամայն պաշտպանված ես դադերով թունավորվելուց:

Գազերով կամ ծխով չգրոհված տեղամասում գրտնվող ջուկերը պետք է հակադադերը պատրաստ ունենան և պատրաստ լինեն կրակ բանալու դադերից հետո գրոհի անցնող հակառակորդի վրա: Իհարկե, գլխավոր նշանակություն ունեն հաստոցավոր գնդադիրները և ավտոմատները:

ԿՈՒՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՍ

Պատերազմում կարմիր բանակի մարտիկներին հարկ կլինի հանդիպել հակառակորդի սավառնակներին, տանկերին, զրահամեքենաներին և զրահագնացքներին. նրանց հետ կռվելու համար ամենից առաջ

պետք է, վոր կարմիր բանակայինները թեկուզ համառոտ կերպով ծանոթանային այդ մեքենաների հատկություններին և նրանց դեմ կռվելու միջոցների հետ:

Սավառնակները: Արագորեն շարժվելով մեծ բարձրության վրա, արագորեն փոխելով ուղղությունը, սավառնակը քիչ խոցելի յե, մինչդեռ միևնույն ժամանակ ինքը կարող է հարվածել հակառակորդին յուր կրակային միջոցներով (գնդացրեր, ուժեր): Բայց սավառնակներից վախենալ չարժե, վորովհետև մեծ տարածություն վրայից նա աննշան հարվածներ է հասցնում, յեթե միայն պատահաբար նետած ուժերը չընկնեն խրամատը: Միայն չպետք է թույլ տալ հակառակորդի սավառնակին ցածրանալ:

Թեպետ ողային թշնամու դեմ կռվելու համար հետեակ զորմասերին կարող են զենիթային հրանոթներ և փակ, բայց հետեակը կարող է պետք է յուր սեփական միջոցներով կռվի հազար մետրից ցածր թռչող սավառնակների դեմ:

Սմվառնակ նկատելով, ջուկը պետք է արագորեն թագնվի, քողարկվի, հարձարվի տեղանքին, վորպեսզի հակառակորդի դիրքը չհայտնաբերի նրա դասավորությունը: Հետեակի համար դա ամենահավատարիմ միջոցն է հակառակորդի սավառնակի դեմ կռվելու համար:

Սավառնակները գնդակոծելու համար հետեակի ամենագործող միջոցներն են հանդիսանում հատուկ նշանառության գործիքներով մատակարարված հաստոցավոր գնդադիրները:

Սավառնակի մինչև 400-500 մետր հանդուգն ցածրացման դեպքում կարող է ներգործոն գնդակոծում լի-

նության, ուժին և ուղղությանը, և նշանակում է, նրանց ոգնությամբ կարելի յե նախորոք պարզել դիրքերի այն տեղաձայնները, վորտեղի վրա սպառնում է մեզ պազային վտանգը:

Յերբ դադաղեցնակային գրոհը հայտնի յե դառնում, կամ ել պաշտպանության չըջանն սկսվում է գնդակոծվել քիմիական արկերով, քիմիական ուռածքերով, կամ քիմիական նռնակներով, բոլորը մնում են իրենց տեղերում, հակադադերը հազած, պատրաստ հանդիպելու հակառակորդին կրակով, նռնակներով և սվիններով: Գազերից փախչելն անոգուտ է: Նրանք այնքան արագ են շարժվում, վոր մեկ է, նրանցից չես փախչի, այլ միայն շնչակտուր կլինես վազքից, ծանր կլինի շնչել, կպատռես հակադադը, և այն ժամանակ—լերջ: Տեղումդ մնալով հանգիստ հակադադի մեջ դու կատարում ես պարտքը և միանգամայն պաշտպանված ես դադերով թունավորվելուց:

Գազերով կամ ծխով չգրոհված տեղամասում գլխով ջրից բերելով պետք է հակադադերը պատրաստ ունենան և պատրաստ լինեն կրակ բանալու դադերից հետո գրոհի անցնող հակառակորդի վրա: Իհարկե, գլխավոր նշանակություն ունեն հաստոցավոր զնդացիները և սովորմատները:

ԿՈՒՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ

Պատերազմում. կարմիր բանակի մարտիկներին հարկ կլինի հանդիպել հակառակորդի սավառնակներին, տանկերին, զրահամեքենաներին և զրահազնացքներին. նրանց հետ կռվելու համար ամենից առաջ

պետք է, վոր կարմիր բանակայինները թեկուզ համառոտ կերպով ծանոթանային այդ մեքենաների հատկության և նրանց դեմ կռվելու միջոցների հետ:

Սավառնակները: Արագորեն շարժվելով մեծ բարձրության վրա, արագորեն փոխելով ուղղությունը, սավառնակը քիչ խոցելի յե, մինչդեռ միևնույն ժամանակ ինքը կարող է հարվածել հակառակորդին յուր կրակային միջոցներով (գնդացրեր, ուռածքեր): Բայց սավառնակներից վախենալ չարժե, վորովհետև մեծ տարածության վրայից նա անշան հարվածներ է հասցնում, յեթե միայն պատահաբար նետած ուռածքները չընկնեն խրամատը: Միայն չպետք է թույլ տալ հակառակորդի սավառնակին ցածրանալ:

Թեպետ ողային թշնամու դեմ կռվելու համար հետևյալ գործառնությունները են զենիթային հրանոթները, բայց հետևակը կարող է մ պետք է յուր սեփական միջոցներով կռվի հազար մետրից ցածր թռչող սավառնակների դեմ:

Սավառնակ նկատելով, ջրից պետք է արագորեն թաքնվի, ճողարկվի, հարմարվի տեղանքին, վորպեսզի հակառակորդի դիտողը չհայտնաբերի նրա դասավորությունը: Հետևակի համար դա ամենահավատարիմ միջոցն է հակառակորդի սավառնակի դեմ կռվելու համար:

Սավառնակները գնդակոծելու համար հետևակի ամենազորեղ միջոցներն են: հանդիսանում հասուկ նշանառության գործիքներով մատակարարված հաստոցավոր գնդացիները:

Սավառնակի մինչև 400-500 մետր հանդուգն ցածրացման դեպքում կարող է ներգործոն գնդակոծում լի-

նել ձեռքի զնդացրի և մինչև անգամ հրացանների ոգնությամբ (թույլ տալով հրացաններից հրաձգություն րանալ միայն ամբողջ ջոկերով) :

Առանձին հրացանաձիգների կողմից սավառնակի վրա, կրակ րանալը պետք է վճռականապես արդելված լինի, վորովհետև այդպիսի հրաձգությունն ոգուտ չի րերի, այլ միայն կվրդովի մարդկանց : Միայն հանդիստ և կարգապահ կրակը կարող է վնաս հասցնել սավառնակին և քչել նրան : Բացի այդ, առանձնակի հրաձգության դեպքում հնարավոր են սխալներ և կարող է զնդակոծվել յուր սավառնակը : Այն դեպքում յերբ սավառնակը զնդակոծելու համար հատկապես առանձնացված են զնդացրային կամ ավտոմատային ջոկեր, ապա անհրաժեշտ է նախորդ զնդացրերի և ավտոմատների համար սարքել պատվող հաստոցներ և նեցուկներ :

Կովի հաջողությունը լիովին ապահովված կլինի, յեթե կրակը մղվում է 4—6—ական զնդ րերի լսմբերով, վորոնք կրակի թանձր խուրձ են կազմում սավառնակի առաջ : Հրաձգության համար զնդացրերը տեղավորվում են ըստ դասակների, վոչ պակաս յերեք կետից՝ խնայած կրակ կազմելու համար : Հակասավառնակային պաշտպանություն կազմակերպվում է յուրաքանչյուր գումարտակի տեղամասում, հրամատարի անմիջական կարգադրությամբ : Հակասավառնակային խմբակներ կազմակերպելու համար ամենից առաջ ոգտագործվում են ոժանդակ մասերի զնդացրերը :

Սավառնակների դեմ կովելու համար գումարտակում առանձնացվող բոլոր զնդացրերը կենտրոնացվում են մի հրամատարի ձեռքում (զնդացրային

հրաձգմի թվից), վորը և ղեկավարում է հակասավառնակային պաշտպանությունը :

Տամիկը հանդիսանում է զորեղ, բավականին շարժունակ մի մեքենա : Բայց, ինչպես ամեն մի մեքենա, տանկը նույնպես հեշտությամբ յենթակա յե ամեն տեսակի փչացման և չի կարող յերկար մասնակցել մարտին : Անհրաժեշտ է նկատել, վոր տանկը սովորաբար չի դործում ճահճոտ կամ խոր ու լայն ջրանցքներով կրատված տեղանքում և մեծ անտառներում :

Տանկի համար խոչընդոտներ են հանդիսանում—ջրով լի փորվածքները վոչ պակաս 5 մետր լայնությամբ և վոչ պակաս մեկ մետր խորությամբ : Ճահճները և ճահճացրած տարածությունները, հաստ ծառերից բաղկացած անտառամասերը, կտրատված անտառները, 45 աստիճանից բարձր ուղղորդ վերելքներով ձորեր և հեհնդատներ, այսինքն՝ գյուղական խրճիթի տանիքի չափ դիքությամբ և այլն :

Անհրաժեշտ է նկատել, վոր տանկերի կրակը ներգործոն է միայն 400 մետրից, մեծ ցրվածության, շատ թույլ նշանառության կրակի ուժով : Տանկերից դիտողությունը շատ դժվար է, մանավանդ տանկի կողքերից : Իրար մեջ կապ պահելը նույնպես դժվար է, մանավանդ տանց յուր հետևակի աջակցության :

Տանկի յերևալու մասին կարող է իմաց տալ ուժեղ տղմուկը, վորը շարժման ժամանակ զգալի յե յերեքշորս վերստից : Տանկի յերևալը մեծ մասամբ կարելի յե սղասել լուսաբացին կամ մառախուղին, այսինքն այն ժամանակ, յերբ մարդիկ ամենից ավելի յեն հողիս, իսկ դիտողությունը դժվարացած է : Ուստի այդ ժամանակ հարկավոր է դիտողների ավելի ուշիմու-

թյուն։ Ամենավտանգավորը—դա տանկի անսպասելի յերևալն ե հրացանաձգի քթի տակ, վորովհետև այդ ժամանակ կարող ե խուճապ առաջացնել։

Տանկն ինքնուրույն չի գործում, այլ անսպասելի հետևակի հետ, վորին նա ուղեկցում և իրեն պաշտպանելու համար, խոչընդոտներն ավերելու և դնդաղների դեմ կռվելու համար։ Վորովհետև դնդակներով (յեթև դնդակը զրահահար չեն) տանկին չեն վնասի, ապա ամենից առաջ պետք և ուշադրություն դարձնել տանկին ուղեկցող հետևակի վրա և դնդակոծել նրան։ Տանկի դեմ կռվելու վճռական միջոցն ե հանդիսանում գումարտակային հրետանին։ Հրետանին տանկերի դեմ պայքար և սկսում մինչև նրանց հետևակին հասնելը, հաստոցավոր դնդաղների կրակի հեռակայություն վրա, ձգտելով վոչնչացնել տանկերը՝ գրոհի համար նրանց յեղման դրությունում։


Տանկերի մոտենալով նրանց հարվածելուն մասնակցում են առանց բացառության հետևակի բոլոր կրակային միջոցները։ Հաստոցավոր դնդաղներն ու հրացանները կրակ են վարում զրահահար դնդակներով։

Մինչև տանկի պաշտպանվող հետևակի դասավորություն մտնելը պետք ե ձգտել յուր կրակով (գլխավորապես հաստոցավոր դնդաղների) բաժանել տանկերը հակառակորդի հետևակից, կասեցնելով նրա հետագա շարժումը։ Իսկ իրենց հետևակից բաժանված տանկերը մարտում անոգնական են։

Յերբ տանկերն անցնում են հետևակի դասավորության մեջ, նրա առջևի շարանները պետք ե աշխատեն աննկատելի լինել տանկերին, թողնելով նրանց անցնել իրենց կողքից։ Յուր ամբողջ ուշադրությունը պետք ե

դարձնել տանկերին հետևող հակառակորդի հետևակին։ Յեթև պաշտպանության առաջավոր շարանին հաջողվի կասեցնել հակառակորդի հետևակին, ապա կարելի չի լիովին հավատացած լինել, վոր հաջորդ շարաններն ու հրետանին հեշտությամբ տանկերի հախից կգան։

Տանկից խուճապի մատնվել և փախչել նրանից վոչ մի դեպքում չի կարելի, վորովհետև դա նշանակում ե ինչև իրեն նրա դնդակահարության տակ։ Զուր հարմարվելով տեղանքին և ոգտվելով ծածկարաններից, պետք ե խիտ տանկին և անվնասակար դարձնել նրան, իսկ այնուհետև գրոհի նրան և դուրս քշել այնտեղից նրա սպասավորներին։



ՔՄՆԿ. 13 Ռեյտերից պատրաստած հակատանկային փակոց

Անհրաժեշտ ե աշխատել ջարդել վահանները, թըրթուրաձև հաստոցը, շրջադիտակը*), դրանով զրկելով

*) Պորժիբ, վորի սկզբությամբ կարելի չե անանել փակ անդից

տանկին շարժվելու և դիտելու միջոցներից: Հրացանները կրակ են բաց անում տանկերի բոլոր անցքերի ու ժեղքերի վրա: Տանկերի դեմ լավ և գործադրել 3—4 ձեռքի նոսակների կապոցները (3—4 միասին) և Նովիցկիի ուսմբերը, նետելով նրանց տանկի տակ:

Տանկերի դեմ կռիվը պետք է մղել ուժերի լիակատար լարումով, նկատի ունենալով, վոր տանկը կարող է անընդհատ կրակ մղել վոչ ավելի կես ժամից, իսկ մարդիկ փակված անցքերով տանկի մեջ ուժեղ չողի և ընդհանրապես աշխտասանքի հսկայական լարվածությամբ հետևանքով կարող են մնալ վոչ ավելի յերեք-չորս ժամ:

Զրահակիր ալտուսթիվներ: Նրանց լավ հատկությունն է՝ 1) շարժման արագությունը, 2) թնդանոթների և զնդացրերի ուժեղ կրակային գործողությունը, 3) անվտանգությունը սովորական կրակներից:

Նրանց թույլ կողմերը՝ 1) մեծ կախվածությունը տեղանքից (հարկավոր են լավ ճանապարհներ, ամուր դետին, առուների բացակայություն), 2) հատուկ փութաջան խնամք մեքենային, ժամանակին մաքրում, յուղում, և ճիշտ մատակարարում վառելանյութերով:

Այսպիսով զրահամեքենան կարող է գործել վոչ ամեն տեղանքում, իսկ մարտում նրա մասնակցությունը ժամանակը տեական չէ (հրանյութերի պաշարը սահմանափակ է), բայց այնուամենայնիվ, ձեռնեղեց թըշնամու ձեռքին նա հանդիսանում է ուժեղ և վտանգավոր միջոց:

Զրահակրի յերեալը կարելի յէ սպասել ամենից համախ—1) լավ ճանապարհներ ունեցող շրջանում, չկըարտված տեղանքում, 2) գիշերով կամ մառախլապատ

ժամանակ, 3) մեր գասալորության թեային տեղամասերում:

Զրահակրի մասին կարելի յէ իմանալ յերեմն բավական ուժեղ աղմուկից:

Զրահամեքենաների դեմ կռիվի միջոցները նույնն են ինչ վոր տանկերի դեմ, և բացի դրանից—ճանապարհների փչացումը, առուներ փորելը, մինչև իսկ վոչ խոր և վերջապես հանգստությունն ու կազմակերպվածությունը:

Զրահագնացքները: Պաշտպանությունը յերկաթուղու մոտ կազմակերպելիս հնարավոր է հակառակորդի զրահազնացքների յերեալը: Զրահազնացքը կարող է շարժվել միայն սարքին յերկաթուղով: Զրահազնացքի ուժը կայանում է նրա հրետանային կրակում, նրա ուժեղ զնդացրային կրակում և սպասավորներին հրացանային կրակից պաշտպանող նրա զրահում: Զրահազնացքի թուլությունը—դա յերկաթուղու սարքին լինելուց և հրետանային կրակից կախված լինելն է:

Գրավելով յերկաթուղու մոտ մի տեղամաս, լավ և ունենալ զրահահար զնդակներ և պայթուցիկ միջոցներ: Վերջիններս անհրաժեշտ են յերկաթուղու մակերևույթը պայթեցնելու համար: Առանձնապես այդ ձեռնտու յէ անել այն դեպքում, յեթե կարելի յէ պայթեցնել հառաչողորդի զրահազնացքի ճանապարհը թիկունքում, կտրելով նրա յետ գնալու ճանապարհը: Այդ կարող են անել սապյորները, հետևակի մարտական կարմիր բանակայինների հետ միատեղ:

Զրահազնացքի հետ անմիջական մարտ կմղեն մեր հրետանին և մեր զրահազնացքները: Իսկ հետևակը պետք է հետևի, վոր զրահազնացքի պաշտպանության

տանկին չարթվելու և դիտելու միջոցներից: Հրացանները կրակ են բաց անում տանկերի բոլոր անցքերի ու ժեղքերի վրա: Տանկերի դեմ լավ է դործադրել 3—4 ձեռքի նռնակների կապոցները (3—4 միասին) և Նովիցկիի ուսմբերը, նետելով նրանց տանկի տակ:

Տանկերի դեմ կռիվը պետք է մղել ուժերի լիակատար լարումով, նկատի ունենալով, վոր տանկը կարող է անընդհատ կբակ մղել վոչ ավելի կես ժամից, իսկ մարդիկ փակված անցքերով տանկի մեջ ուժեղ չոգի և ընդհանրապես աշխտանքի հսկայական լարվածությամբ հետևանքով կարող են մնալ վոչ ավելի յերեք-չորս ժամ:

Ձրահակիր ավտոմեքիկներ: Նրանց լավ հատկությունն է՝ 1) չարժման արագությունը, 2) թնդանոթների և գնդացրերի ուժեղ կրակային գործողությունը, 3) անվտանգությունը սովորական կրակներից:

Նրանց թույլ կողմերը՝ 1) մեծ կախվածությունը տեղանքից (հարկավոր են լավ ճանապարհներ, ամուր գետին, առուների բացակայություն), 2) հատուկ փութաջան խնամք մեքենային, ժամանակին մաքրում, յուղում, և ճիշտ մատակարարում վառելիքայութեբով:

Այսպիսով զրահամեքենան կարող է դործել վոչ ամեն տեղանքում, իսկ մարտում նրա մասնակցության ժամանակը տևական չէ (հրանյութերի պաշարը սահմանափակ է), բայց այնուամենայնիվ, ձեռներեց թըշնամու ձեռքին նա հանդիսանում է ուժեղ և վտանգավոր միջոց:

Ձրահակրի յերևալը կարելի յէ սպասել ամենից՝ հաճախ—1) լավ ճանապարհներ ունեցող շրջանում, չկըսրատված տեղանքում, 2) գիշերով կամ մութախլապատ

ժամանակ, 3) մեր դասավորության քեային տեղամասերում:

Ձրահակրի մարին կարելի յէ իմանալ յերբեմն բավական ուժեղ աղմուկից:

Ձրահամեքենաների դեմ կռիվի միջոցները նույնն են ինչ վոր տանկերի դեմ, և բացի դրանից—ճանապարհների փչացումը, առուներ փորելը, մինչև իսկ վոչ խոր և վերջապես հանգստությունն ու կազմակերպվածությունը:

Ձրահագնացքները: Պաշտպանությունը յերկաթուղու մոտ կազմակերպելիս հնարավոր է հակառակորդի զրահազնացքների յերևալը: Ձրահազնացքը կարող է չարթվել միայն սարքին յերկաթուղով: Ձրահազնացքի ուժը կայանում է նրա հրետանային կրակում, նրա ուժեղ գնդացրային կրակում և սպասավորներին հրացանային կրակից պաշտպանող նրա զրահում: Ձրահազնացքի թուլությունը—դա յերկաթուղու սարքին լինելուց և հրետանային կրակից կախված լինելն է:

Գրավելով յերկաթուղու մոտ մի տեղամաս, լավ է ունենալ զրահահար գնդակներ և պայթուցիկ միջոցներ: Վերջիններս անհրաժեշտ են յերկաթուղու մակերևույթը պայթեցնելու համար: Առանձնապես այդ ձեռնտու յէ անել այն դեպքում, յեթէ կարելի յէ պայթեցնել հառադորդի զրահազնացքի ճանապարհը թիկունքում, կտրելով նրա յետ գնալու ճանապարհը: Այդ կարող են անել սապյորները, հետևակի մարտական կարմիր բանակայինների հետ միատեղ:

Ձրահազնացքի հետ անմիջական մարտ կմղեն մեր հրետանին և մեր զրահազնացքները: Իսկ հետևակը պետք է հետևի, վոր զրահազնացքի պաշտպանության

տակ հակառակորդի հետևակը չմոտենաւ և յուր ժամանակին նրան հակահարված տաւ:

Հնարավոր են դեպքեր, վոր մեր դիրքերին մոտեցած հակառակորդի զրահազնացքից հետևակ դուրս թուչի, վորը կաշխատի գրոհել պաշտպանվողի վրա: Դրան սկսոք ե ուշադիր հետևել և ժամանակին հակահարված տալ:

Զրահազնացքին հարվածելու հարկ չկա, քանի վոր կապված լինելով յերկաթուղուն նա քեզ մոտ խրամատները չի գա և յերկար ժամանակ մի տեղում մնալ չի կարող: Զրահազնացքը կանգնելու դեպքում մեր հրքետանին արագորեն կհարվածի: Անհրաժեշտ ե միայն ուշադիր հետևել յերկաթուղու մակերևութին և կապ պահել հրետանային դիտողների հետ:

Անսպասելիորեն յերևացող զրահազնացքից վոչ մի դեպքում չի կարելի խուճապի մատնվել, վորովհետև հենց այդ ե միայն պետք զրահազնացքին—վախեցածներին և փախչողներին նա գնդակահարում ե ինչպես կաքավներին: Այդպիսի դեպքերում հարկավոր ե հանգիստ լինել, թաղնվել և ուշադիր նայել, վորպեսզի զրահազնացքից կամ նրա յետևից հետևակ չերևա, իսկ այդ ժամանակներում հարկավոր ե աշխատել փչացնել ճանապարհը, վորպեսզի գնացքը կտրվի յուրայիններից:

Յեղրափակման մեջ հակառակորդի զրահակիր մասերի դեմ կռվելու մասին պետք ե ասել, վոր հետևիակը միշտ ել կարող ե նրանց դեմ հանդուրժյաճք կռվել: Տանկերը, զրահամեքենաները և զրահազնացքները բարոյական ուժեղ տղավորություն են գործում միայն թույլ և կաղմալուծված հետևակի վրա: Կայուն և կարգապահ հետևակը չի վախենում զրահա-


դիր մասերի թվացող անխոցելիութունից և հետևակ զորամասերի դառավորությունը մտնելու նրանց ընդունակութունից:

Հատկապես անհրաժեշտ ե հաստատորեն յուրացնել, վոր հրոհող զրահակիր զորամասերի առջևից անկարգ նահանջելը տանում ե դեպի փախչող հետևակի համարյա լիակատար վոչնչացում: Իսկ կայուն և մարտունակությունը պահպանած հետևակը, տանկի և զրահամեքենայի միայն տեսքից չփախչող այդպիսի հետևակը զրահակիր մասերի հետ ունեցած մարտում միշտ հաջողություն ձեռք կբերի և կպահի պաշտպանության գրաված շրջանը:


ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինք ե ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԸ	6 2
Ինք ե ՋՈԿԸ	3
ՋՈԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ	9
Ա. Հրաձգայիմ ջոկեր	10
Բ. Ձեռքի գնդացրի ջոկեր	10
Գ. Հաստոցավոր գնդացրայիմ ջոկեր	13
ՋՈԿԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԹԵՎ ՋՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ	14
ՀԵՏԵՎԱԿԻ ԽՄԲԱԿԱՑԻՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ— ԼԱՎԱԳՈՒԹՆ ՄԻՋՈՑՆ- Ե ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀՐԵ- ՏԱՆՈՒ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ	15
ՆՇԱՆԸ ՃԻՇՏ՝ ՎԵՐՑՆԵՍ—ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎ ԿԼԻՆԻ	20
ԳՆԴԱՑԻՐԸ—ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔՆ Ե	21
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՋՈԿՈՒՄ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ	23
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԽՈԶԸՆԴՈՏՆԵՐ	24
ՔՈՂԱՐԿՈՒՄ	30
ԹՇՆԱՄԻՆ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ Ե—ՄԱՐՏԸ ՆՐԱ ՀԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌՋԵՎՈՒՄ	34
	36

ՀՐԱՄԱՏԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԻ ԾԱՆՐ	
ՄՈՄԵՆՏՈՒՄ	40
ԿՐԱԿԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ	43
ՈԳՆԵԼՈՎ ՀԱՐԵՎԱՆԻԴ ՓՐԿՈՒՄ ԵՍ ՔԵԶ	47
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՇԵՐՈՎ	49
ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	55
ԿՈՒՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ	58
Սավառակներ	59
Տանկը	61
Զրահակրի ավտոմոբիլները	64
Զրահագնացիները	65



<< Ազգային գրադարան



NL0217783

40.507

4162 30 407.